ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Արսեն Ռաֆիկի Պապիկյան**

# Ուսանողների պրոֆեսիոնալ պատրաստության կատարելագործման ուղիները մանկավարժական պրակտիկայի ընթացքում

ԺԳ. 00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»

(Ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ

մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

**Ատենախոսություն**

**Գիտական ղեկավար՝** մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ե.Ս. Հակոբյան**

**Երևան - 2017**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ______ **4**

**ԳԼՈՒԽ I. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱ. ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ** ______ **10**

1.1.Մանկավարժական պրակտիկան ֆիզկուլտուրային կրթության համակարգում ______ 10

1.2.Մանկավարժական պրակտիկայի կառուցվածքը և բովանդակությունը ______ 12

1.3.Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների մասնագիտական կոմպետենտությունը ______ 15

1.4.Ուսանողների պատրաստվածությունը մանկավարժական պրակտիկային ______ 21

**ԳԼՈՒԽ II. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՆ** ______ **33**

2.1.Փորձագետների կարծիքը ուսանող-պրակտիկանտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների տիրապետման վերաբերյալ ______ 34

2.2.Ուսանողների մանկավարժական պրակտիկայի պատրաստվածության աստիճանի ինքնագնահատումը ______ 40

2.3.Դպրոցականների կարծիքը ուսանող-պրակտիկանտների մանկավարժական գործունեության վերաբերյալ ______ 48

**ԳԼՈՒԽ III. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ** ______ **53**

3.1.Մանկավարժական պրակտիկայի ծրագիրը՝ որպես ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործման կարևոր գործոն ______ 53

3.2.Մանկավարժական պրակտիկայի ծրագրի ներդրման արդյունավետություն ______ 80

3.3.Փորձագետների կարծիքը ծրագրի ներդրման արդյունավետության վերաբերյալ ______ 89

3.4.Ուսանողների մասնագիտական պատրաստվածության աստիճանի ինքնագնահատումը գիտափորձից հետո ____ 92
**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ____ 97**
**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ____ 100**
**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ____ 101**
**ՀԱՎԵԼՎԱԾ ____ 120**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Ներկայումս հանրության ուշադրության կենտրոնում է բարձրագույն կրթության արմատական բարեփոխումների իրականացումը, որը նոր, ավելի բարձր խնդիրներ է առաջադրում ուսումնական գործընթացի կատարելագործման ուղղությամբ:

Բոլոնիայի եռաստիճան կրթական համակարգի ներմուծումը Հայաստան (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա)՝ նպատակ ունի ինտեգրվել եվրոպական կրթության ընդհանուր համակարգին: Ուստի, մասնագիտական կրթության ոլորտում պահանջվում են պետական մակարդակով բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում (Հ.Հ. Պետրոսյան, 2012):

Նշված գործընթացը պատասխանատու խնդիրներ են առաջադրում բուհական համակարգին, այդ թվում՝ ֆիզիկական կուլտուրայի ոլորտում պատրաստել բարձրորակ մասնագետներ, որը ներկա հասարակության սոցիալական պահանջն է:

Բուհական կրթական համակարգում իր որոշիչ դերն ու կարևորությունն ունի ուսումնական, մանկավարժական, մասնագիտական պրակտիկաները, որոնք ցանկացած բուհի ուսումնադաստիարակչական գործընթացի գլխավոր ու անհրաժեշտ օղակն են:

Պատահական չէ, որ արդի ժամանակաշրջանում պրակտիկայի տարբեր ձևերը դարձել են գիտական ուսումնասիրությունների առարկա (Бурмистрова М.Н., 2004, Михайлишин Г.И., 2006; Воронин Д.И., 2009, Зиннатнурова А.А.,2008, 2010):

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների, տարբեր մարզաձևերի մարզիչների, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետների պատրաստման համակարգում պրակտիկայի կարևոր դերն ակնհայտ է: Դա այն օղակն է, որտեղ ձևավորվում, կատարելագործվում և ստուգվում են ուսանողների առարկայական, մեթոդական, մանկավարժական գիտելիքների, կարողությունների, հմտությունների կիրառումն ուսուցման և դաստիարակության իրական պայմաններում: Ապագա մանկավարժի գործունեության արդյունավետությունը կախված է այն հանգամանքից, թե բուհում

սովորելու տարիներին, մանկավարժական պրակտիկայի ընթացքում ինչ կոմպետենտություն է ձեռք բերել:

Տարբեր տարիներին կատարված գիտական հետազոտությունները վկայում են, որ ուսանողների 23 - 31%-ը թույլ են պատրաստված մանկավարժական պրակտիկային (Р. Ф Хентов, 1977, И.Н.Решетень, Г.В.Редхер, 1986, Չատինյան Ա.Ա. և այլք, 2012): Մտահոգիչ է այն փաստը, որ ուսանողները թերանում են՝ հաղորդել տեսական գիտելիքներ, զուգակցել վարժությունների բացատրումը և ցուցադրումը, կատարել աշակերտների գործունեության կազմակերպման համարժեք մեթոդների ընտրություն, դրսևորել անհատական մոտեցում, բացահայտել և ուղղել սխալները, վարել փաստաթղթերը: Նրանք նաև դժվարանում են աշակերտների հետ անցկացնել ֆիզիկուլտուրային-առողջարարական, արտադասարանական, մարզական-զանգվածային և դաստիարակչական աշխատանքներ: Մինչդեռ դրանց տիրապետումը մեծապես կնպաստի՝ մանկավարժական գործունեության ընթացքում ավելի արդյունավետ լուծելու դպրոցականների ֆիզիկական դաստիարակության առողջարարական, կրթական և դաստիարակչական խնդիրները:

Գիտամեթոդական գրականության (М.Н.Бурмистрова, 2004, Р.А.Давыдов, 2004, И.В.Коротков, 2004, Т.А.Крюкова, 2004, Л.М.Куликова, 2004, 2008, О.М.Матвеева, 2004, Е.В.Оганнесян, 2005, Е.Г.Салинов, 2005, Л.В.Загрекова, Т.М.Иванова, 2006, Т.А.Михайлова, Л.М.Кравцова, 2007, Ф.Г. Казарян, 2009) առաջատար մասնագետների մանկավարժական փորձի ուսումնասիրությունը և վերլուծությունը թույլ տվեց վերհանել հիմնախնդրի վերաբերյալ հետևյալ հակասություններ.

- Մի կողմից բարձրագույն կրթական համակարգում կատարվող բարեփոխումներն ուղղված են՝ բարձրացնելու կրթության որակը համապատասխան ժամանակակից պահանջներին, մյուս կողմից՝ այդ պահանջներն արտացոլված չեն գործող մանկավարժական պրակտիկայի բովանդակության մեջ:

- Մի կողմից շեշտադրվում է ուսանողների մասնագիտական կարողությունների և հմտությունների տիրապետումը, մյուս կողմից՝ թույլ է մշակված դրանց ձևավորման մեթոդիկան մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

Հետևաբար, ներկա ժամանակաշրջանում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողների պրոֆեսիոնալ պատրաստության հիմնախնդիրների ուսումնասիրությունը մանկավարժական պրակտիկայի համատեքստում արդիական է և ունի գիտական, տեսական, սոցիալական մեծ նշանակություն:

***Հետազոտության նպատակը:*** Կատարելագործել Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողների պրոֆեսիոնալ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ուղիները մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

***Հետազոտության օբյեկտը:*** Մանկավարժական պրակտիկայի գործընթացը՝ որպես բարձրագույն ֆիզիկուլտուրային կրթության համակարգում մասնագետների պրոֆեսիոնալ պատրաստության բաղադրիչներից մեկը:

***Հետազոտության առարկան:*** ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ուսանողների՝ մանկավարժական պրակտիկայի բովանդակությունը:

***Հետազոտության վարկածը:*** Ենթադրվում է, որ գիտականորեն հաստատված մանկավարժական պրակտիկայի բովանդակության լրամշակումը և կիրառումը կնպաստի ուսանողների գիտելիքների, մասնագիտական հմտությունների և կարողությունների առավել արդյունավետ ձևավորմանը:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների կատարած աշխատանքների բաղադրիչային գնահատումը հնարավորություն կընձեռնի պատրաստության թերի կողմերի ժամանակին բացահայտմանն ու ուղղմանը:

***Հետազոտության խնդիրները:*** Հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողների մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և անցկացման վիճակը:
2. բացահայտել ուսանողների պրոֆեսիոնալ գիտելիքների և մանկավարժական կարողությունների տիրապետման աստիճանը:
3. մշակել մանկավարժական պրակտիկայի ծրագիր, գնահատման տեխնոլոգիա ու ներդնել ուսումնական գործընթաց:
4. բացահայտել մանկավարժական պրակտիկայի ծրագրի ներդրման արդյունավետությունը մասնագետների պատրաստման գործընթացում:

***Հետազոտման մեթոդները:*** Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են մանկավարժության մեջ լայնորեն տարածված հետևյալ մեթոդները՝ գրական աղբյուրների ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում, ուսումնական փաստաթղթերի վերլուծություն, մանկավարժական դիտում, անկետավորում, ինքնագնահատում, փորձագիտական հարցում, մանկավարժական գիտափորձ, մաթեմատիկական վիճակագրություն:

***Հետազոտության գիտական նորույթը:*** Մանկավարժական պրակտիկայի ընթացքում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողների պրոֆեսիոնալ պատրաստության գործընթացի արդյունավետության բարձրացման ուղիների մշակումն ու հիմնավորումը.

- բացահայտվել է երրորդ կուրսի ուսանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը մանկավարժական պրակտիկային,
- ժամանակակից պահանջներին համապատասխան հստակեցվել և հիմնավորվել է ֆիզիկական կուլտուրայի մասանգետների մանկավարժական պրակտիկայի բովանդակությունը,
- ճշգրտվել և մշակվել է մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման մեթոդիկան,

- մշակվել և փորձարկվել է մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների կողմից կատարվող ուսումնական, ֆիզկուլտուրա-առողջարարական, մարզական-զանգվածային, դաստիարակչական աշխատանքների գնահատման տեխնոլոգիան,
- մանկավարժական պրակտիկայի ծրագիրը ներդրվել է ուսումնական գործընթացում և ապացուցված է նրա կենսունակությունը:

***Հետազոտության տեսական նշանակությունը:*** Հետազոտության արդյունքում ընդլայնվել և արդիականացվել է ուսանողների պրոֆեսիոնալ պատրաստության բովանդակությունը: Ցույց է տրված մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման ուղիները:

***Հետազոտության գործնական նշանակությունը:*** Կատարված հետազոտական աշխատանքի արդյունքները կիրառական նշանակություն ունեն բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության համակարգում: Դրանց գործածումը թույլ է տալիս օպտիմալացնել մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման գործընթացը, բովանդակությունը, հնարավորություն է տալիս բարձրացնել ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել մանկավարժական պրակտիկայի մեթոդիստների վերապատրաստման, գործնական ամբիոնների կողմից անցկացվող ուսումնական պրակտիկայի կազմակերպման, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերապատրաստման, նաև մանկավարժական բուհերի պրակտիկայի կազմակերպման ընթացքում:

***Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.***

1. մանկավարժական պրակտիկայի ընթացքում մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումը՝ որպես Ֆիզիկական կուլտուրայի ոլորտի որակյալ մասնագետների պատրաստման նախապայման,

2. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մանկավարժական պրակտիկայի ծրագրի բովանդակությունը և իրականացման մեթոդիկան՝ որպես պրոֆեսիոնալ պատրաստության ապահովման գործոն,
3. մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների գնահատման տեխնոլոգիան՝ որպես ուսանողների մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման պայման:

***Աշխատանքի փորձաքննությունը:*** Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովված է հեղինակի կողմից ժամանակակից մեթոդաբանական մոտեցումներով, տեսական և գործնական մեթոդների կիրառման համալիրով, որոնք համապատասխանում են հետազոտության առաջադրանքներին և տրամաբանությանը՝ տեսական մշակումների փորձարարական ստուգումով, բնութագրվում են ուսանողների փորձարարական աշխատանքի հիմքում ստացած գիտելիքների և կարողությունների մակարդակում դրական փոփոխություններով: Հետազոտության արդյունքները ներդրված են բուհերի ուսանողների կրթական գործընթացում, ինչն էլ հաստատված է ներդրման ակտերով:

***Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:*** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, մեթոդական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային տեքստի 119 էջերում, աշխատանքում բերված են 23 աղյուսակներ, 12 տրամագրեր, 9 հավելվածներ:

# ԳԼՈՒԽ I. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱ. ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

## 1.1.Մանկավարժական պրակտիկան ֆիզկուլտուրային կրթության համակարգում

Արդի ժամանակներում կարևորվում է բարձր որակավորում ունեցող մասնագետների պահանջը, որոնք պետք է ունենան ոչ միայն գիտելիքների բարձր մակարդակ, այլև տիրապետեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին (В.П. Кузовлев, 1999, Э. А. Здановская, 2003):

Միանգամայն հասկանալի է, որ ուսանողները պետք է ժամանակակից այս պահանջները կարողանան արդյունավետ իրականացնել մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում մասնագետների պրոֆեսիոնալ մանկավարժական պատրաստության հիմնախնդիրները տարբեր տարիների ընթացքում ուսումնասիրվել են բազմաթիվ հեղինակների կողմից (Ռ.Տ. Մելիքսեթյան, 1991, 2001, О.А. Абдулина, 1978,1984, С.Ю. Юровский,1986, Т.А. Воронова, Г.А. Засобина, Н.В.Кузьмина, Н.В.Савин, 1988, М.Г. Шубик, 1990, В.Т. Чичикин, 1995, О.В. Гаевская, 1997, Л.И. Лубышева, В.А.Магин, 2005, В.А.Магин, 2006, А.П. Матвеев, 2004, А.А, Рейзих, 2007, Л.Г. Балановская, 2011, Н.Н. Сивцев, 2011, 2014, А.В. Фомичев, 2014):

Մանկավարժական պրակտիկան ֆիզիկական դաստիարակության մասնագետի պատրաստման ողջ համակարգի անբաժանելի մասն է, որի շնորհիվ ամրապնդվում և կատարելագործվում են ինստիտուտում տեսական և գործնական պարապմունքների ընթացքում ստացած գիտելիքները, կարողությունները և հմտությունները (Ю.А. Янсон 1962, Г.В. Редхер, 1987, Н.Н. Решетень, А. А. Щетинина, Г.В. Редхер, 1987, В.М. Корецкий, 1998, Г.З. Карнаухов, 1998, Վ.Բ.Առաքելյան, Ռ.Տ.Մելիքսեթյան, Կ.Ա.Մելքոնյան,1999):

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում իրականացվում, միաձույլ դրսևորվում և գնահատվում են ուսանողների պրոֆեսիոնալ-մանկավարժական պատ-

րաստության բոլոր կողմերը՝ տեսական, գործնական, բարոյահոգեբանական, դաստիարակչական և այլն:

Ըստ Ն.Ն. Սիվցևի (Н.Н. Сивцев, 2011)՝ մանկավարժական պրակտիկան ապագա մասնագետների համար համարվում է տեսական և անմիջական մանկավարժական գործունեությունը կապող օղակ: Պրակտիկայի ընթացքում նրանց մոտ ձևավորվում են մանկավարժական կարողությունների տարբեր բաղադրիչներ՝ ճանաչողական, կառուցողական, կազմակերպչական, հաղորդակցական և արտահայտչական, բացի այդ՝ իրականացվում են նաև հարմարողական, ուսուցողական, դաստիարակչական, զարգացնող գործառույթները:

Ներկայումս մասնագետների գործնական պատրաստվածությունը ֆիզկուլտուրարային կրթության մասնագետների թույլ օղակներից մեկն է: Վ.Մ.Կորեցկին (В.М.Корецкий,1998), Վ.Տ.Չիչիկինը (В.Т. Чичикин,1995) նշում են, որ պրակտիկայի ընթացքում կատարվող աշխատանքներում ուսանողները դժվարանում են տեսական գիտելիքները կիրառել գործնականում, դրսևորել մասնագիտական կարողություններ, ինչը դժվարեցնում է լուծելու մանկավարժական խնդիրները և հետագայում հարմարվելու մանկավարժական գործունեությանը:

Վ.Ա. Սլաստենինը (В.А. Сластенин, 2002), Տ.Վ. Բոնդարչուկը, (Ե.Վ. Միրոգորոդսկայան և Օ.Վ. Վիրկը (Т.В. Бондарчук, Е.В. Мирогородская, О.В.Вирк, 2011) մանկավարժական գործունեության պատրասվածությունը դիտարկում են՝ որպես անձի արժեքավոր մասնագիտական նշանակություն ունեցող կարողություն, որն իրենից ներկայացնում է միմյանց փոխկապակցված կառուցվածքային բաղադրիչներ՝ դրդապատճառներ, հետաքրքրություններ, մասնագիտական գիտելիքներ և կարողություններ:

Մանկավարժական պրակտիկայի արդյունավետության հիմնական պայմանն է բովանդակության մեջ ներառել այնպիսի առաջադրանքներ և աշխատանքներ, որոնք արտացոլում են ապագա մասնագիտական գործունեությունը, նպաստում կարևոր կարողությունների և հմտությունների ձևավորմանը (В.П. Беспалько, 1989): Հեղինակը նշում է, որ ֆիզկուլտուրային կրթության բակալավրիատի համակարգում

ուսումնառության ողջ տարիների ընթացքում նախատեսվում է՝ ուսումնական, ճանաչողական, մանկավարժական և մասնագիտական պրակտիկաներ, որոնց միջոցով ապահովվում է մասնագիտական կարողությունների ձևավորումը:

Գրական աղբյուրների ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ միշտ էլ ուսանողների պատրաստությունը պրակտիկաներին (մանկավարժական, մասնագիտական) լիարժեք չի կատարվել (Ю. Д. Железняк, 1994, В.А. Багина, 2005, В.С. Володина, 2007, Ю.В. Ивановский, Л.А. Амирова, 2009):

Գրական աղբյուրներին անդրադարձը (Б.А. Сироткина, С.А.Гониянц, 1987, В.В. Михайлов, С.Ю. Юровский, 1987, В.А. Сургучев, 1989, Յու.Գ. Գրիգորյան, 1996, Н.К Шамаев, 1996, 1999, Г.З. Карнаухов, 1998, Степанов Н.С., Портнягин И.И, Егоров В.И., 1999, П.И. Пидкасистый, 2005, Л.Г. Балановская, 2011, Е.И. Смирнова, 2011) ցույց է տալիս, որ ուսանողները մանկավարժական պրակտիկայի ընթացքում և արտադասարանական աշխատանքների իրականացման ժամանակ դժվարանում են իրականացնել դաստիարակչական, ֆիզկուլտուրային-առողջարարական, աշակերտների առաջադիմության, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի գնահատման, վարժությունների կատարման ժամանակ սխալների բացահայտման և ուղղման, մանկավարժական վերլուծության խնդիրները:

Այսպիսով՝ ֆիզիկական կուլտուրայի ապագա ուսուցիչների, մարզիչների, մեթոդիստների, ֆիտնես հրահանգիչների և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետների պատրաստման գործում առաջատար տեղ է գրավում մանկավարժական պրակտիկան: Նրա բովանդակությունից և անցկացման մակարդակից է կախված ուսանողների մանկավարժական-մասնագիտական հետագա հաջողությունները:

### 1.2.Մանկավարժական պրակտիկայի կառուցվածքը և բովանդակությունը

Ժամանակակից ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ուսանողների պատրաստվածությունը պետք է ունենա հետևյալ բնութագիրը՝ կենտրոնացված

պետական կառավարում, մասնագետների պատրաստման միասնական մոդել, ապագայում գործնական աշխատանքներում որոշվող խնդիրներ (Г.П. Неминущий, 1995):

Ներկայումս Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում պրակտիկայի կազմակերպման համակարգն ունի հետևյալ կառուցվածքը (տրամագիր 1).




Տրամագիր 1. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պրակտիկայի կառուցվածքը

Ե.Վ.Կրյակինան (Е.В. Крякина, 2006) առանձնացնում է մասնագետների պատրաստության համակարգում հետևյալ փուլերը: Նա գտնում է, որ **նախնական փուլն** իր մեջ ներառում է մեթոդական բնույթի ուսումնագործնական պարապմունքներ՝ բազային մարզաձևերով: Այստեղ ստացած գիտելիքները և կարողությունները լրացվում են ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդկայի դասընթացի նյութերով: Ուսումնական պրակտիկայի գործընթացում ուսանողների մոտ ձևավորվում են այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք թույլ են տալիս ինքնուրույն իրագործել ուսուցչի և մարզիչ-մանկավարժի գործառույթները, այնուհետև դրանք

տարբեր տեսակի ուսումնական հաստատություններում մանկավարժական պրակտիկայի գործընթացում կատարելագործվում են:

Պրակտիկայի **առաջին փուլում** ուսանողի աշխատանքները կապված են նախադպրոցական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության կազմակերպչական ձևերի տարբեր մեթոդիկաների տիրապետմամբ:

**Երկրորդ փուլում** ուսանողները սովորում են հանրակրթական դպրոցի ֆիզիկական կուլտուրայի բազային աշխատանքային համակարգը, ուսումնասիրում են պլանավորման հիմնական փաստաթղթերը և տարբեր տեսակի աշխատանքների հաշվառումը, ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացման առանձնահատկությունները և դասղեկի աշխատանքները: Ուսանողներին, մանկավարժական պրակտիկային պատրաստելիս, հատուկ ուշադրություն է դարձվում ուսումնադաստիարակչական գործընթացի հետևյալ կողմերին.

- Կարողանալ ձևակերպել սեփական գործունեությունը մեկ տարվա, կիսամյակի, տրված կոնկրետ թեմայի ուսուցման, առանձին դասերի համար:
- Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներն անցկացնել տարբեր դպրոցական ծրագրերով, ինչպես նաև վերլուծել և գնահատել իր և գործընկերների գործունեությունը:

Նշված աշխատանքները պրակտիկայի արդյունավետ անցկացման կարևոր պայման են:

Մանկավարժական բուհի ուսանողների մասնագիտական պատրաստվածության գործընթացում մեծ տեղ է զբաղեցնում ուսումնական պրակտիկան (Д.И.Воронин, 2007, 2009, В.П. Копаев, 2014, Յու.Գ. Գրիգորյան, Ա.Ռ. Պապիկյան, 2014): Մենք ուզում ենք անդրադարձ կատարել ուսումանական պրակտիկային, քանի որ այն կազմակերպվում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի բոլոր կուրսերում և ընդգրկված է գործնական ամբիոնների գործող ծրագրերում՝ տարբեր ժամաքանակով (հավելված 1): Հետևաբար, ուսումնական պրակտիկան ուսանողների՝ մանկավարժական պրակտիկային նախապատրաստվելու կարևորագույն գործընթաց է: Տարբեր ամբիոնների ուսումնական պրակտիկայի

ծրագրի բովանդակության վերլուծությունը և համեմատումը մանկավարժական պրակտիկայի ծրագրին բացահայտեց, որ մանկավարժական պրակտիկայի պահանջներն ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորման տեսանկյունից անհրաժեշտ չափով արտացոլված չեն: Ուստի, ուսումնական պրակտիկայի բովանդակությունը պետք է համաձայնեցնել մանակավարժական պրակտիկայի ծրագրին:

Ֆիզկուլտուրային կրթության համակարգում մանկավարժական պրակտիկան համարվում է ուսումնադաստիարակչական գործընթացի օրգանական մասը, որն ապահովում է ապագա ուսուցիչների տեսական պատրաստության համադրումը գործնական աշխատանքի հետ և անցկացվում է ուսումնադաստիարակչական հաստատություններում: Մանկավարժական պրակտիկայի ծրագրերի վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել հետևյալ բաժինները՝ կազմակերպչական, ճանաչողական, ուսումնական, մեթոդական, դաստիարակչական, արտադասարանական, ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական-զանգվածային և գիտահետազո-տական (Л.Н. Кочергов, Л.Б. Спиридонова, 1984, А.П. Матвеев, 1987, , Б.А. Сироткина, С. А.  Гониянц, 1987, Վ.Բ. Առաքելյան, Ռ.Տ. Մելիքսեթյան, Կ.Ա. Մելքոնյան, 1999, В.П. Кривцун,П.И. Новицкий, В.П. Каширин, 2002, И.В. Еркомайшвили И.В., О.Л. Жукова, 2004, Ա. Վ. Պողոսյան, 2008):

Վերը նշված ծրագրերի բաժիններն ուղղված են՝ ապահովելու ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը, ձևավորելու մանկավարժական կարողություններ, որոնք նպաստում են արդյունավետ իրականացնելու ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի  բազմաբնույթ գործունեությունը:

## 1.3. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների մասնագիտական կոմպետենտությունները

Մանկավարժական հետազոտություններում գոյություն ունեն տարբեր մոտեցումներ «կոմպետենտություն» հասկացության մեկնաբանման նկատմամբ, որը,

որպես մեթոդոլոգիական կատեգորիա՝ դեռևս չունի հստակ, կայացած սահմանում: Կոմպետենտություն սահմանման բոլոր մոտեցումները պատկերացումներ են ստեղծում այն մասին, որ նրանք ձևավորվում և արտահայտվում են պրակտիկայում (Ю.Г. Татур, 2004, Ю.В. Фролов, Д.А. Махотин, 2005):

Հատուկ մասնագիտական պատրաստվածության համար ժամանակակից պրոֆեսիոնալ կրթության մեջ օգտագործվում է կոմպետենտություն հասկացությունը, որն արտահայտում է ուսանողի տեսական և գործնական պատրաստվածության միասնությունը՝ ուղղված մանկավարժական գործունեության իրականացմանը և նրա պրոֆեսիոնալիզմի որակավորմանը (В.А. Сластенин, 2002, Ю.Д. Железняк, 2010, Е.В. Крякина, Е.В. Разова, 2011):

Օ.Վ. Ռոմանովան (О.В. Романова, 2012) կոմպետենտություն ասելով հասկանում է գիտելիքի և իրավիճակի միջև կապ ստեղծելու կարողություն, ինչպես նաև պրակտիկ գործողությունների իրականացման հնարավորություն, պահանջվող գիտելիքների համակարգի հայեցակարգի առկայություն, հետևաբար՝ ըմբռնում, համապատասխան մտածողության տիպ, որը թույլ կտա օպերատիվ կերպով խնդիրներին կամ առաջադրանքներին տալ համապատասխան ընթացք:

Վ.Ա. Սլաստենինի (В.А.Сластенин, 2002) կարծիքով մանկավարժի մասնագիտական կոմպետենտությունն արտահայտում է իր տեսական և գործնական պատրաստվածությունը՝ մանկավարժական գործունեության ընթացքում և բնութագրում է նրա պրոֆեսիոնալիզմը: Հետևաբար, կոմպետենտությունն արտացոլվում է գործունեությունում:

Մանկավարժական կոմպետենտության ձևավորման գործընթացն ուղղված է ուսանողների կողմից գիտելիքների ձեռքբերմանը, կարողությունների տիրապետմանը, ինչպես նաև ինքնադրսևորման ընդունակությունների զարգացմանը (Л.В. Калинина, И.В.Прохорова, 2010, О.В. Романова, 2012):

Մանկավարժական պրակտիկան այն գործընթացն է, որն անմիջապես նպաստում է ապագա մասնագետի պրոֆեսիանալ կոմպետենտության ձևավորմանը: Մասնագիտական կոմպետենտությունը՝ գիտելիքների, կարողությունների և պրակտիկ

հմտությունների փոխկապակցված միասնություն է, որն ապահովում է մասնագիտական արդյունավետ գործունեություն՝ ուղղված կոնկրետ աշխատանքին պատրաստվելուն և, թույլ է տալիս գործնականում ցույց տալ սեփական ներուժը մասնագիտական գործունեությունում:

Գրականության մեջ հանդիպում է երկու հասկացություն՝ կոմպետենցիա և կոմպետենտություն (С.А. Хазова, 2008, Ф.Г. Казарян, 2009, Ա.Ս.Բուդաղյան Ա.Ս., Ս.Բ. Կարաբեկյան, 2010): «Կոմպետենտություն» հասկացությունը փոխկապակցված է «կոմպետենցիա» հասկացության հետ, այսինքն՝ պահանջների մի շարք, որոնք պետք է կիրառվեն մասնագիտական գործունեության ոլորտում: Լայն առումով ֆիզիկական կուլտուրայի մասնագետների կոմպետենտությունն իր մեջ ներառում է մասնագիտական հոգեբանամանկավարժական գիտելիքներ, կարողություններ, որոնք անհրաժեշտ են՝ իրականացնելու ուսումնադաստիարակչական, ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական-զանգվածային կազմակերպչական գործունեություն: Տարբեր տարիներին մասնագիտական կոմպետենտության հիմնախնդիրներով զբաղվել են Ն.Ա. Գրիշանովան (2002), Յու.Գ. Թատուրը (2004), Յու. Վ. Ֆրոլովը, Դ.Ա. Մախոտինը (2004), (Н.А. Гришанова, 2002, Ю.Г. Татур, 2004, Ю.В. Фролов, Д.А. Махотин, 2004):

Ս.Ա. Խազովան (С.А. Хазова, 2008) առաջարկում է առանձնացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի մասնագետների կոմպետենտություն երեք խումբ՝

1. ընդհանուր գիտական կոմպետենտություն, որը կազմում են կրթության հիմքը,
2. ընդհանուր մանկավարժական կոմպետենտություն,
3. հատուկ մասնագիտական կոմպետենտություն, որը բնորոշ է ֆիզիկական կուլտուրայի ոլորտի մասնագետին:

Ա.Ա.Դերկաչն (А.А. Деркач, 1981) առանձնացնում է մանկավարժի մասնագիտական կոմպետենտության այն տեսակները, որոնք պրոֆեսիոնալիզմի հիմնական կողմերն են:

Մանկավարժի պրոֆեսիոնալիզմի **առաջին կարևոր կողմը** մանկավարժական գործունեության կոմպետենտությունն է, որն իր մեջ ներառում է.

1. Գիտելիքներ՝ ուսուցչի աշխատանքի էության, սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների, դպրոցական ծրագրի առանձնահատկության և այլնի մասին:
2. Մանկավարժական կարողություններ՝

- կարողանալ վերլուծել մանկավարժական իրավիճակները, առաջադրել մանկավարժական համապատասխան խնդիրներ,
- ընտրել, խմբավորել և արդիականացնել ուսումնական նյութը, կիրառվող միջոցները և մեթոդները,
- տիրապետել մանկավարժական կանխատեսությանը (սովորողների վարքի, առաջադիմության, ֆիզիկական զարգացման մակարդակի և շարժողական պատրաստվածության):

Մանկավարժի պրոֆեսիոնալիզմի **երկրորդ կողմը** մանկավարժական շփման (հաղորդակցական) կոմպետենտությունն է, որն իր մեջ ներառում է՝

- շփման խնդիրների և միջոցների, ինչպես նաև մանկավարժական էթիկայի իմացություն,
- մանկավարժական կարողություններ՝ անհրաժեշտ է առաջադրել մի շարք խնդիրներ և շփման ընթացքում վերադասավորել դրանք, կարողանալ հաշվի առնել շփման համար այլ մասնակիցների դիրքորոշումները, գնահատել կոլեգաների փորձը, մասնակցել մանկավարժական համագործակցությանը և այլն,
- անձի կարևորագույն մասնագիտական հատկություններ՝ մանկավարժական տակտ, մանկավարժական զգացմունքայնություն, հուզական ինքնակարգավորում և այլն:

Մանկավարժի պրոֆեսիոնալիզմի **երրորդ կողմը** անձի ինքնուրույնության կոմպետենտությունն է, դրանք են՝

1. Գիտելիքներ անձի հոգեբանության մասին,
2. Մանկավարժական կարողություններ.

- ուսումնասիրել և ձևավորել սովորողների անձը,

- կարողանալ ուսումնասիրել և զարգացնել անձնային հատկությունները,
- կազմել և իրականացնել անձնական և մասնագիտական ինքնազարգացման պլաններ,
- կարողանալ տեսնել սեփական աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, անհատական ոճի յուրահատկությունները, աշխատունակության պահպանումը և այլն,
- մասնագիտական և մանկավարժական դիրքորոշում՝ ինքնավերլուծություն, անհատականության զգացում,

3. Մասնագիտական կարևոր հատկություններ՝ նպատակասլացություն, մանկավարժական ռեֆլեքսիա և մանկավարժական ընդունակություններ՝ հասկանալ դիմացինին և ազդել նրա վրա:

Մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման նմանատիպ մոտեցում է առաջարկում նաև Ռ.Ռ. Մագոմեդովը և Լ.Ս. Կուտեպովան (Р.Р. Магомедов, Л.С. Кутепова, 2010)՝ առանձնացնելով ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի կրթադաստիարակչական, կազմակերպչական, ֆունկցիոնալ և մեթոդական կոմպետենտություն:

Վ.Պ. Բեսպալկոն (В.П. Беспалько, 1989) առանձնացնում է տարբեր մասնագիտությունների պրոֆեսիոնալ կայունություն հասկացությունը: Հեղինակը գտնում է, որ մասնագիտական գործունեության գիտակցման համար կարևոր է կայունությունը:

Ըստ Վ.Ն.Դրուժինինի (В.Н. Дружинин, 1999) տվյալների՝ հոգեբանական կայունության ցուցանիշներից են՝ ինքնավստահությունը, պատասխանատվությունը, ոչ բարենպաստ իրավիճակներ հաղթահարելու կարողությունը, կազմակերպվածությունը, ակտիվ ինքնագիտակցումը, կյանքի հանդեպ դրական վերաբերմունքը և այլն: Համաձայն հեղինակի՝ այդ հոգեբանական կայունության ձևավարումը մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման բաղադրիչներից մեկն է:

Վերջին տարիներին գրականության մեջ մասնագետների պատրաստության ոլորտում հատուկ ուշադրություն է դարձվում նրանց գործունեության գնահատման

վրա՝ կիրառելով **պորտֆոլիո** մեթոդը, որը բնութագրվում է՝ որպես անձի ինքնագնահատման մեթոդ (М.С. Кашафутдинов 2011): Անձի ինքնագանահատումը այն հիմքն է, որը կարգավորում է նրա վարքը և գործունեությունը: Պորտֆոլիոյի հիմնական նպատակը կրթական գործունեության ինքնավերլուծությունն է՝ ցույց տալով նրա արդյունքները և գնահատականը: Եվ այդ տեսանկյունից կարևորվում է պորտֆոլիոն, որը կարևորագույն մեթոդ է մասնագետների կոմպետենցիաների ձևավորման համար:

Ն.Վ. Մուհամետզյանովան (Н.В. Мухаметзянова, 2011) ֆիզիկական կուլտուրայի ապագա ուսուցիչների համար մասնագիտական կարևոր ցուցանիշներից է համարում դեպի բարձր նվաճումներ ուղղված դրդապատճառների առկայությունը:

Գ.Ա. Շիշենկոն, Մ.Գ. Ֆարաֆոնովը (Г.А. Шишенко, М.Г.Фарафонов, 2011) կարևորում են ուսանողների ուղղորդումը՝ ապագա մասնագիտությանը, ինչպես նաև հոգեբանաֆիզիոլոգիական հատկությունների և նրանց մակարդակի ձևավորումը:

Ե.Վ. Կոնեևան (Е.В. Конеева, 2001) ուսումնասիրել է ֆիզիկական կուլտուրայի մասնագետի մանկավարժական դիրքորոշման ձևավորման հոգեբանամանկավարժական պայմանները: Ըստ հեղինակի՝ մասնագետի մանկավարժական դիրքորոշման ձևավորման ռազմավարության հիմքում ընկած են անձի և մասնագիտական գործունեության միասնական համակարգված պատկերացումները: Ֆիզիկական կուլտուրայի մասնագետի մասնագիտական դիրքորոշումը դիտարկվում է ընդհանուր առմամբ մանկավարժական գործունեության և նրա առանձին բաղադրիչների հանդեպ վերաբերմունքով:

Լ.Ա. Կոսոլապովան և Ն.Վ. Յունաևան (Л.А. Косолапова, Н.В.Юняева, 2009) գտնում են, որ բարձր մակարդակի ուսուցիչներին բնորոշ է նաև պրոֆեսիանալ-հետազոտական գործունեությունը, որը ենթադրում է մանկավարժական գործընթացը դիտարկել որպես պրոբլեմատիկ իրավիճակ, որը պահանջում է հիմնավորում, գործնական խնդրի արդյունավետ լուծման համար տեսական նոր ինֆորմացիայի որոնում, որտեղ պրակտիկան խթանիչ գործոն է սուբյեկտի ինքնակրթության և

ինքնակատարելագործման գործընթացում: Մասնագիտական, հետազոտական գործընթացի զարգացումը հետազոտական կոմպետենտության ձևավորման ցուցանիշ է:

Ա.Գ. Մադժուգան (А.Г. Маджуга, 2009), Ա.Գ. Մադժուգան, Է.Ն. Իլյասովան, Ս.Ն. Սլադկովը, (А.Г. Маджуга, Э.Н.Ильясова, С.Н.Сладков, 2011) ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների կոմպետենտության շարքում առանձնացնում են նրանց պատրաստվածությունը աճող սերնդի վալեոլոգիական դաստիարակության հանդեպ: Վերլուծելով և ընդհանրացնելով մասնագետների մասնագիտական պատրասվածության ուղղությամբ կատարված աշխատանքները՝ նրանք առաջարկում են այդ կարևոր որակի հետևյալ սահմանումը՝ որպես ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի ապագա ուսուցչի պատրաստվածությանն ուղղված ուղենիշ: Վերը նշված պատրաստվածությունը որոշվում է որպես ինտեգրված անձնային մասնագիտական կրթություն՝ բնորոշված սուբյեկտի ընդունակությամբ, կազմակերպված աճող սերնդի առողջ ապրելակերպի վարմամբ և դաստիարակմամբ, որոնց մեջ ներառված են այնպիսի բաղադրիչներ, որոնք սահմանում են առողջ ստեղծագործական գործունեության հաջողությունը, դրանք են՝ հոգեբանամանկավարժական և առողջագիտական գիտելիքները և կարողությունները, մոտիվացիոն ուղղությունները:

Վերլուծելով և ընդհանրացնելով վերը նշված մասնագետների կարծիքները՝ ամփոփ ձևով կարելի ներկայացնել, որ պրոֆեսիոնալ պատրաստությունը արդյունավետ կլինի միայն այն ժամանակ, երբ կներառի գիտելիքների համակարգ, գործունեության հիմնական միջոցներ, աշխարհայացքի ձևավորում, որոնք հետագայում կկազմեն ապագա մասնագետի կոմպետենցիաների բաղադրիչները:

### 1.4. Ուսանողների պատրաստվածությունը մանկավարժական պրակտիկային

Մասնագետի գործնական պատրաստվածությունն այսօր համարվում է բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության համակարգում թույլ օղակներից մեկը: Ե.Վ. Կուզմիչևան ( Е.В. Кузьмичева, 1990) նշում է, որ շրջանավարտների տեսական

գիտելիքների մակարդակի և նրանց գործնականում կիրառման կարողության միջև բացակայում է փոխկապակցությունը: Մասնավորապես, ապացուցված է, որ մանկավարժների 5-20%-ը չի համապատասխանում մասնագիտական գործունեության պատրաստվածության միջին մակարդակին, իսկ 35-50%-ը մասամբ է համապատասխանում: Հեղինակների կողմից անցկացված հետազոտություններից բացահայտվեց 3-րդ կուրսի ուսանողների մասնագիտական-մանկավարժական գործունեության պատրաստվածության ցածր մակարդակը:

Փորձագետների ստուգումից պարզվեց մանկավարժական պրակտիկայի անցկացման ժամանակ ուսանողների մասնագիտական հատկությունների, տեսա-մեթոդական գիտելիքների և գործնական կարողությունների և հմտությունների ձևավորման ցածր մակարդակը (В.Ю.Петров, 1990):

Գ.Վ. Ռեդխերի (Г.В. Редхер, 1987) կողմից մասնագետների շրջանում անցկացրած հարցումը և ծրագրերի վերլուծությունը հստակ ցույց տվեցին, որ բացակայում են պրակտիկայի տվյալ փուլի համար խնդիրները, հստակ չեն առանձնացված այն պրոֆեսիոնալ-մանկավարժական կարողությունները, որոնք պետք է ձեռք բերի պրակտիկանտը, ծրագրի առանձին բաժինների կատարման համար սահմանված չէ կոնկրետ ժամանակահատված, բացակայում են գնահատման չափանիշները: Ըստ հեղինակի՝ մանկավարժական պրակտիկայի սկզբում ուսանողների մեթոդական պատրաստվածության մակարդակը թույլ է՝ միայն 4% պրակտիկանտներն են ունեցել պատրաստվածության բարձր մակարդակ, 21%-ը՝ լավ, 52 %-ը՝ միջին և 23 %-ը՝ ցածր մակարդակ: Այն ուսանողները, որոնց պատրաստվածության մակարդակը ցածր է, թույլ են նաև մեթոդական կարողությունների, կազմակերպչական, ճանաչողական կողմերը:

Ինչպես նշում է Ն.Ֆ. Սինգինան (Н.Ф. Сингина, 1991), ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ուսանողները մանկավարժական պրակտիկայի ընթացքում դժվարանում են սովորողների դաստիարակչական խնդիրների լուծման հարցերում: Հեղինակի կողմից բացահայտված է, որ ուսանողները բարձր են գնահատում իրենց ընդհանուր մանկավարժական, (3,93 միավոր), հատուկ մանկավարժական (3,41 միավոր),

կոնկրետ մարզական աշխատանքների կազմակերպման պատրաստվածությունները (3,33 միավոր), համեմատաբար ցածր են գնահատում իրենց գիտելիքները՝ ֆիզիկական կուլտուրայի դասերի դաստիարակչական խնդիրների իրականացման հարցերում (2,52 միավոր):

Ա.Վ. Ռուլևի, Մ.Տ. Լուկինիխի (А.В. Рулев, М.Т. Лукиных, 1990) կողմից անցկացրած մանկավարժական դիտումից պարզվեց, որ մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների պատրաստվածության կողմերում նկատելի որակական և քանակական փոփոխություններ են կատարվում: Մանկավարժական պրակտիկայի սկզբում ուսանողների պրոֆեսիոնալ մանկավարժական կարողությունները և հմտությունները մեթոդիստների կողմից գնահատվել է 6,12 միավոր, ուսանողների ինքնագնահատմամբ՝ 6,48 միավոր: Մանկավարժական պրակտիկայի ընթացքում էական փոփոխություններ ուսանողների անձնային պրոֆեսիոնալ կարողություններում արձանագրված չէ (մեթոդիստների գնահատմամբ աճը կազմում է ընդամենը 1,56 միավոր, ուսանողների գնահատմամբ՝ 1,39 միավոր): Հեղինակները հստակ նշում են, որ պատճառներից մեկն էլ այն է, որ ուսանողների քառամյա ուսումնառության ընթացքում ուսումնական պրակտիկային քիչ ժամ է հատկացվում:

Վ.Ա. Սմիրնովի և Տ.Մ. Անտոնովայի (В.А. Смирнов, Т.М. Антонова, 1990) հետազոտությունից պարզվեց, որ ուսանողների պատրաստվածությունը մանկավարժական և կազմակերպչական հարցերում դեռևս թույլ է: Այսպես՝ մրցումների կազմակերպման և անցկացման հարցերում 86 % ուսանողները չեն նշել մրցումների կազմակերպման և անցկացման կարգը, 92 %-ը չեն նշել բժշկական ծառայության և մրցումների տեղի նախապատրաստումը: Ավելի մտահոգիչ է այն փաստը, որ 92% ուսանողները դժվարանում են գրագետ մշակել մարզիչների սեմինար խորհրդակցության անցկացման պլանը:

Ա.Ի. Միխեևի և Ի.Ն.Գալակտինովի (А.И. Михеев, И.Н. Галактионов, 1984) անցկացրած հարցումները ցույց տվեցին, որ մինչմանկավարժական պրակտիկան,

60% ուսանողների մոտ թույլ է զարգացած գիտահետազոտական, կազմակերպչական և կառուցողական ընդունակությունները:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում էական փոփոխություններ է կատարվում ուսանողների պատրաստվածության հաղորդակցական, կազմակերպչական, դիդակտիկ-մանկավարժական, ճանաչողական կողմերում:

Ի.Լ. Գոլովինը (И.Л. Головин, 1993) կարևորում է ուսանողների ինքնակրթությունը պրակտիկայի պատրաստման և անցկացման ընթացքում: Հեղինակը տեսականորեն և գործնականորեն հիմնավորել է ուսանողների պրոֆեսիոնալ ինքնակրթության բովանդակությունը: Նրան հաջողվել է ցույց տալ, որ ուսանողների պրոֆեսիոնալ ինքնակրթության նպատակաուղղված ուսուցումը և պատրաստումը թույլ է տալիս պրակտիկայի ընթացքում արդյունավետ կազմակերպել սովորողների դաստիարակչական գործունեությունը: Ուսանողները սկսում են էլ ավելի հմուտ կիրառել հսկումը և կազմակերպչական հնարները:

Կատարված հետազոտական աշխատանքերի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ ուսանողների պատրաստվածության աստիճանը մանկավարժական պրակտիկային ցածր է, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեք լուծելու առաջադրված խնդիրները:

Մանկավարժական գիտության արդիական հիմնախնդիրներից մեկը ժամանակակից փուլում մանկավարժների պրոֆեսիոնալ վարպետության կատարելագործման ուղիների մշակումն է (И.И. Ткаченко, 1990, В.С.Леднев, 1991, Ю.Г. Фокин, 2002, Р.М.Шипилов, 2005, И.П.Подласый, 2008, С.В.Туленков, 2011), ինչը պայմանավորված է հասարակության զարգացման օրինաչափությունների և մասնագետների պատրաստվածության որակի բարձրացման հիմնահարցի բարձր սոցիալական նշանակությամբ: Ֆիզիկական կուլտուրայի բուհերի յուրահատկությունը այն է, որ մանկավարժի մասնագիտական կրթության բովանդակության կարևորագույն բաղադրիչը շարժողական գործունեությունն է, այդ իսկ պատճառով ուսանողը պետք է տիրապետի մասնագիտական գիտելիքների և կարողությունների, որոնք պայմանավորված են նաև նրա շարժողական պատրաստվածության ներուժով:

Կ.Կ. Պլատոնովը (К.К. Платонов, 1977, с. 3-7) գտնում է, որ դիդակտիկ կարողությունները կլինեն ավելի արդյունավետ այն դեպքում, եթե ուսանողների հետ աշխատանքը չսահմանափակվի միայն ցուցադրական լավ դասերով կամ մանկավարժական փորձով, այլ՝ կիրառվեն նաև մանկավարժական գործունեության տարբեր ձևեր:

Ե.Վ. Ֆադեևան (Е.В. Фадеева, 2009) մեծ ուշադրություն է դարձնում ապագա մանկավարժների շարժումների կուլտուրայի վրա: Շարժումների կուլտուրան նա դիտարկում է՝ որպես հասարակության ընդհանուր կուլտուրայի սոցիալական գործունեություն: Հեղինակի կարծիքով դրա մեջ մտնում է՝ շարժողական կարողությունների և շարժողական գործունեության կուլտուրան, որն իր մեջ ներառում է ոչ միայն շարժումների կատարելիության մակարդակը, այլև դրանց արդյունավետությունը և նպատակաուղղվածությունը: Բացի այդ, ոչ պակաս տեղ է զբաղեցնում շարժողական ակտիվության ինտելեկտուալ և հուզական կողմը՝ որպես երկարակեցության մի մաս:

Ըստ Ե.Վ. Ֆադեևայի՝ ֆիզկուլտուրային բուհերի շրջանավարտների գործնական պատրաստվածության ցածր մակարդակն ու նրա անջատումը մասնագիտական գործունեությունից արդիական հիմնախնդիր է:

Վ. Ե. Ժաբակովն (В.Е. Жабаков, 2007) ուսումնասիրել է մանկավարժական ինստիտուտի ուսանողների պատկերացումները՝ ֆիզիկական կուլտուրայի ոլորտում մասնագիտական գործունեության վերաբերյալ: Հետազոտությունների արդյունքում առանձնացվել են այն կարևոր գիտելիքները և կարողությունները, որոնք անհրաժեշտ են մասնագիտական գործունեության համար՝

- հասկանալ մասնագիտական գործընթացի կառուցվածքը և ինտեգրված ֆիզիկական կուլտուրայի միջառարկայական յուրահատկությունը,
- վերլուծել պետական կրթական չափորոշիչով ուսումնական ծրագրերը, կրթական տեխնոլոգիաները և ուսումնադաստիարակչական գործընթացները,
- տիրապետել ֆիզիկական զարգացման ցուցանիշների որոշման մեթոդներին,

- կարողանալ կազմակերպել և անցկացնել ֆիզիկական կուլտուրայի դասեր,
- կարողանալ ուսումնական գործընթացում հաշվի առնել սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունները:

Ուսուցիչ-մեթոդիստների կատարած հարցումները (Е.В. Крякина, Е.В. Разова, 2011) ցույց են տվել, որ ուսանողները մանկավարժական պրակտիկայի ժամանակ ունենում են հետևյալ դժվարությունները.

- գործնական կարողությունների և հատուկ գիտելիքների միջև թույլ կապ,
- անբավարար տեսական պատրաստվածություն,
- որոշակի գործնական հմտությունների բացակայում,
- ուսուցման մեթոդիկաների վերաբերյալ անբավարար գիտելիքներ,
- կազմակերպչական բնույթի դժվարություններ:

Գ.Ի. Միխայլիշինն (Г.И Михайлишин, 2006) ուսումնասիրել և մշակել է բարձրագույն ուսումնական հաստատությունների համակարգում ֆիզիկական կուլտուրայի ապագա ուսուցչի մասնագիտական կարողությունների ձևավորման մոդելը:

Ա.Ա. Իոնովն (А.А. Ионов, 2002) ուսումնասիրել է Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ուսանողների մոտ մանկավարժական պրակտիկայի ընթացքում մասնագիտական կարողությունների ձևավորումը: Ըստ հեղինակի՝ մանկավարժական պրակտիկայի կազմակերպան արդյունավետությունը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

- մանկավարժական պրակտիկայի ռազմավարական ուղղվածություն,
- մանկավարժական պրակտիկայի ընթացքում ծագած խնդիրների արագ լուծում,
- ուսումնական պրակտիկայում մանկավարժական պրակտիկայի բովանդակության արտացոլում,
- ուսումնական նյութի տիրապետման հսկում:

Ա.Գ. Պոլիվաևը, Ա.Ա. Գերասկինը և Ի.Ն. Գրիգորովիչն (А.Г. Поливаев, А.А. Гераськин, И.Н. Григорович, 2010) ուսումնասիրել են ուսանողների մանկավարժական-

մասնագիտական կարողությունների ձևավորման աստիճանը: Արդյունքում՝ նրանց կողմից բացահայտվեց ուսանողների կառուցողական և ստողծագործական կարողությունների ցածր մակարդակը, դրա հետ մեկտեղ որոշվեց ուսանողների կազմակերպչական և հաղորդակցական կարողությունների միջին մակարդակը, որը հեղինակները բացատրում են ուսանողների ընտրած մարզաձևերի առանձնահատկություններով:

Յու.Վ. Իվանովսկին և Լ.Ա. Ամիրովան (Ю. В. Ивановский, Л.А. Амирова, 2009) կարևորում են ֆիզկուլտուրայի ապագա ուսուցիչների մասնագիտական սոցիալականացումը, ինչը նախատեսում է ուսանողների ակտիվ ներգրավումը մանկավարժական պրակտիկային:

Ա.Ա. Զինատուրովան (А.А. Зиннатурова, 2007, 2008) ուսումնասիրել է ուսանողների մասնագիտական վարպետության ձևավորումն անձնային կողմնորոշիչ կրթության տեխնոլոգիայի հիման վրա: Հեղինակն առանձնացնում է մասնագետների պատրաստվածության տարբեր կողմերը՝

- նրա աշխարհայցքը (արժեքային կողմնորոշումների և համոզմունքների համակարգը),
- պատրաստվածության մասնագիտական մակարդակը, որտեղ առանձնանում են տեսական գիտելիքները, գործնական կարողությունները և հմտությունները,
- կազմակերպչական կարողությունները, որոնք բնորոշ են կազմակերպչական և դաստիարակչական գործունեությանը,
- ընդհանուր կուլտուրան և բազմակողմանի զարգացվածությունը,
- բարոյական կերպարը:

Վ.Ի.Պալիյն (В.И. Палий, 2009) ուսումնասիրել է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի կարևորագույն հատկությունները: Դրա հիման վրա հեղինակը ներկայացրեց ժամանակակից ուսուցչի մոդելը:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում կարևորվում է ուսանողների մասնագիտական ինքնակրթությունը (Т.А. Воронова, Г.А.Засобина, Н.В. Кузьмина,

1988, Ю.Г. Григорян, А.Г. Арутюнян, 1994): Այդ միտքը շեշտադրում է նաև Ա.Ա. Զինատուրովան (А.А. Зиннатурова, 2011): Նա գտնում է, որ մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողները պետք է ձեռք բերեն ինքնակրթությամբ զբաղվելու կարողություն:

Կրթության համակարգի ցանկացած հայեցակարգում, որը նպատակ ունի ձևավորել առողջության կուլտուրա, առաջատար գաղափար է համարվում ապահովել աճող սերնդի ֆիզիկական և հոգեկան զարգացումը:

Ըստ Գ.Ն. Սերիկովի և Ս.Գ. Սերիկովի (Г.Н. Сериков, С.Г.Сериков, 2008)՝ մանկավարժական գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ մանկավարժների կրթական գործընթացի ամբողջական ազդեցությունը նպաստի յուրաքանչյուր սովորողի առողջության ամրապնդմանը և պահպանմանը՝ առանց վնաս հասցնելու ընդունված սոցիալական արդյունքներին:

Այս դեպքում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի կարևորագույն մասնագիտական կոմպետենցիաներից մեկն է սովորողների առողջությունն ամրապնդելու և պահպանելու կարողությունը: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է պատասխանատվություն կրի սովորողների ֆիզիկական առողջության ամրապնդման համար, ինչպես նաև դաստիարակի պահանջմունք՝ իրենց իսկ առողջության պահպանման հանդեպ:

Միանգամայն պարզ է, որ ուսումնական գործընթացը պետք է համարժեք լինի անձի ձևավորման գործընթացին, բայց, ցավոք, այսօրվա ուսուցիչն ունի մակերեսային պատկերացում երեխայի աճի ու զարգացման կանոնավորության և նրանց տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ: Այսօր նրանք թույլ են պատկերացնում, որ բեռնվածությունն է համարվում արդյունավետ, ինչպես է ուսումնական գործընթացն ազդում օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի վրա և այլն (О.Ф. Жуков, С.В. Данилов, 2012): Հեղինակներն առավել մանրամասն ուսումնասիրել են առողջության պահպանման վերաբերյալ ուսուցչի պատրաստվածության աստիճանը:

Համալիր հետազոտության արդյունքում Օ.Ֆ. Ժուկովը (О.Ф. Жуков, 2011) բացահայտեց ուսուցչի պատրաստվածության աստիճանն առողջական

գործունեությունն իրականացնելու ժամանակ: Ըստ նրա՝ ուսուցիչների 12,8 % -ն ունեն ցածր մակարդակ, 44,7% -ը՝ միջին և 42,5 % -ը՝ բարձր մակարդակ:

Ա.Գ. Գրաֆը (А.Г. Граф, 1993) հետազոտել է ուսանողների պատրաստվածությունը արտաուսումնական, ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական-զանգվածային աշխատանքներ իրականացնելիս: Նա առանձնացրել է այն մանկավարժական կարողությունները, որոնք անհրաժեշտ են այդ գործունեությունն իրականացնելու համար: Մանկավարժական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկավարժական բուհերի շրջանավարտների պատրաստվածության մակարդակը համապատասխան չէ ժամանակակից պահանջներին: Այսօր ակնհայտորեն արտադասարանական գործընթացում չեն օգտագործվում աշակերտների պոտենցիալի դաստիարակումը, ինչպես նաև մի շարք հետազոտություններից պարզվում է, որ երեխաների և երիտասարդների կրթության բոլոր փուլերում բացակայում է առողջ ապրելակերպի պատշաճ ուսուցումը, որն էլ աշակերտների շրջանում տարածված հիվանդությունների բարձր մակարդակի պատճառ է (И.А. Коновалова, А.М. Кузьмин, 2011) :

Ուսանողների հետ տարվող աշխատանքների ուսումնասիրման փորձը վկայում է, որ ֆիզիկական կուլտուրայի ապագա ուսուցչի պատրաստումը մասնագիտական գործունեությանը, դեռևս լիարժեք մշակված չէ: Անհրաժեշտ է ակտիվացնել աշակերտների հետ կազմակերպվող արտադասարանական և ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքները (А.Г. Граф, 1993):

Ինչպես ցույց է տվել գիտամեթոդական գրականության վերլուծությունը, հանրակրթական դպրոցներում իրականացվող մանկավարժների արտադասարանական գործունեությունը պրոֆեսիոնալ գործունեության կարևոր ձև է, ինչը նախատեսված է ուսուցչի աշխատանքային պլանով:

Լ.Մ.Կրավցովան (Л.М. Кравцова, 2009) նույնպես իր հետազոտություններում շեշտում է, որ ուսանողների պատրաստվածության մակարդակն արտաուսումնական աշխատանքներն իրականացնելիս ցածր է և չի ապահովում նրա արդյունավետությունը: Հետևաբար, անհրաժեշտ է պրակտիկայի ընթացքում

ակտիվացնել ուսանողների պատրաստվածությունը արտադասարանական և դաստիարակչական աշխատանքներն իրականացնելու ժամանակ (Г.П. Богданов, 1985, Ю.Д. Железняк, 1994, В.В. Королев, 2002):

Վերը նշված հիմնախնդրի լուծման համար Վ.Կ. Բալսևիչը (В.К. Бальсевич, 1996), Լ.Ի. Լուբիշևան (Л.И. Лубышева, 2005), Է. Յու. Ավանեսովն (2014) առաջարկում են հանրակրթական դպրոցներում կիրառել մարզական դասեր, որոնք կակտիվացնեն դպրոցում արտադասարանական աշխատանքները: Հեղինակները կարևորում են ուսանողների պատրաստվածությունը՝ այդ աշխատանքներն իրականացնելիս:

Գրականության վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ մանկավարժական պրակտիկան՝ որպես ուսանողների ուսուցման արդյունավետ ձև, նպաստում է նրանց բազմատեսակ մասնագիտական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Այսպիսով՝ գրական աղբյուրների ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկավարժական պրակտիկան ուսանողների պատրաստության բոլոր կողմերի միաձույլ դրսևորումն է, որը, միաժամանակ, բացահայտում է ուսանողների պրոֆեսիոնալ-մանկավարժական թերի կողմերը: Այսօր պահանջվում է, որպեսզի յուրաքանչյուր ուսանող ունենա մասնագիտական պատրաստության բարձր մակարդակ՝ մանկավարժական, մեթոդական բազմազան կարողություններ և հմտություններ, որոնց ապագա ուսուցիչները պետք է տիրապետեն բուհում սովորելու ընթացքում: Ուսուցիչների պատրաստման համակարգում մանկավարժական պրակտիկայի կարևոր դերն ակնհայտ է: Դա այն պատասխանատու օղակն է, որտեղ ստուգվում, ձևավորվում և կատարելագործվում են ուսանող-պրակտիկանտների առարկայական ու մեթոդական, մանկավարժական, հոգեբանական, բժշկակենսաբանական գիտելիքները:

Հիմնախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականության համակողմանի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և բովանդակության, կառուցվածքի հետևյալ հիմնական ուղղությունները ՝

- պրակտիկայի նպատակի, խնդիրների, բովանդակության առավել արդյունավետ կազմակերպման միջոցների և մեթոդների որոշումը (В.В.Кулиш, 1978, З.И. Васильева, 1979, О.А. Абдулина, Е.Н. Кузьмин, 1984, Л.Н.Кочергов, Л.Б. Спиридонова, 1984, А.И. Пискунов, 1985, Н.Н. Решетень, Г.В. Редхер, 1985, Е.Р. Яхонтов, 1988, Л.И. Борейко, 1990, Н.Б.Бомов,1990, В.Л. Горленко, 1996, Н.Е. Бурлакова, 1999, Е.В. Бондаревская, 2000, Л.П.Сущенко, 2003, Ю.И.Сазонов, Р.А.Айдемиров, 2011),
- պրակտիկայի հետազոտումը՝ որպես ուսանողների կողմից մանկավարժական գործունեության ձևերի և բովանդակության տիրապետման միջոց (Г.В. Редхер, 1987, К.Н.Боголюбов, 1989, В.Ю. Петров, 1990, Л.А.Булатова, 1991),
- ապագա մանկավարժի կարևորագույն մասնագիտական կարողությունների ձևավորման գործընթացի ուսումնասիրումը (А.М. Войлоков, 1984, В.И. Шестернина, 1985, В.Г.Рындак, 1988, И.Х. Мухамедалиев, 1990, В.Г.Максимов, 2002)։

Վերջին տարիներին Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում նպատակաուղղված աշխատանքներ են իրականացվում ապագա ուսուցիչների մասնագիտական կարողությունների ձևավորման և կատարելագործման ուղղությամբ, դրանց զգալի մասն առնչվում է մանկավարժական և մասնագիտական պրակտիկաների կազմակերպմանն ու անցկացմանը (Ю. Г. Григорян, А. Г. Арутюнян 1994, Ա. Վ. Պողոսյան, 2008)։

Այդ ուղղությամբ կատարված գիտական աշխատանքները (Ю. Г. Григорян, Л. Г. Арутюнян 1994, Ա.Ա.Չատինյան, 2012) թույլ տվեցին ուսումնասիրել, պրակտիկայի ընթացքում ստուգել յուրաքանչյուր ուսանողի համապատասխան կարողությունների ձևավորման աստիճանը, դրանք հմտությունների վերածելու առանձնահատկությունները, բացահայտել ուսանողների մեթոդական-մանկավարժական պատրաստման գործում տեղ գտած առավել լուրջ թերությունները, դրանց առաջացման պատճառներն ու հաղթահարման ուղիները։ Ներկայումս այս հարցերի լուծման կարևոր պայմաններից մեկը մանկավարժական պրակտիկայի

առավել արդյունավետ կազմակերպումն է, նրա բովանդակության համակցումը ուսումնական և մասնագիտական պրակտիկաների բովանդակության հետ:

Այսպիսով՝ կարելի է հաստատել, որ գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց են տալիս, որ բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության ժամանակակից պահանջներն առաջադրում են համակողմանի մոտեցում՝ ուսանողների մոտ ձևավորելու կայուն գիտելիքներ, բազմազան կարողություններ և հմտություններ: Ուսանողից պահանջվում է լինել սոցիալապես ակտիվ, դրսևորել նախաձեռնություն, հետաքրքրություն, ստեղծագործական լայն մտածելակերպ:

Վերը նշվածը թելադրում է վերանայել ուսանողների մանկավարժական պրակտիկայի բովանդակությունը և մշակել նրանց մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործմանը համապատասխան ծրագիր:

## ԳԼՈՒԽ II. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՆ

Ատենախոսական աշխատանքի հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրության նպատակով բացահայտել ենք տարբեր ռեսպոնդենտների՝ մանկավարժական պրակտիկայի մեթոդիստների, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանողների և հանրակրթական դպրոցի աշակերտների կարծիքները: Կազմվել է համապատասխանաբար երեք հարցաթերթիկ (հավելված 2,3,4)՝ առաջնորդվելով սոցիոլոգիայում ընդունված մեթոդներով (Г.В. Осипов, 1983, В.И. Добренков, А.И. Кравченко, 2006):

Հարցերի բովանդակությունն ընտրելիս հիմք են ընդունվել ժամանակակից կրթական այն պահանջները, որոնք ներառված են Բոլոնյան կրթական համակարգում և անհրաժեշտ են մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման համար:

Մանկավարժական պրակտիկայի մեթոդիստներին առաջադրված հարցերում արծածված էին պրակտիկայի ընթացքում ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների բացահայտման և ձևավորման առանձնահատկությունները:

Երրորդ կուրսի ուսանողների հարցումը նպատակ ուներ՝ բացահայտելու նրանց մասնագիտական գիտելիքների և կարողությունների մակարդակի ինքնագնահատումը: Հարցումն անցկացվել է մինչմանկավարժական պրակտիկան՝ որոշելու նրանց գիտելքիների և կարողությունների տիրապետման մակարդակը պրակտիկայից առաջ և հետո: Վերջինս հնարավորություն տվեց բացահայտել պրակտիկայի ընթացքում ուսանողների ձեռք բերած գիտելիքների և կարողությունների մակարդակը:

Հիմնախնդրի վիճակը համակողմանի ուսումնասիրելու նպատակով բացահայտվել է դպրոցականների կարծիքը և նրանց վերաբերմունքը ուսանող-պրակտիկանտների գործունեության վերաբերյալ:

## 2.1.Փորձագետների կարծիքը ուսանող-պրակտիկանտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների տիրապետման վերաբերյալ

Կրթության ողջ համակարգի բարեփոխումները պահանջում են, որ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ներկայիս շրջանավարտը տիրապետի այնպիսի մասնագիտական կոմպետենցիաների, որոնց միջոցով ինքնուրույն կհաղթահարի մանկավարժական գործունեության ժամանակ առաջ եկած բազմաթիվ մասնագիտական խնդիրներ (Л. М. Куликова, 2004, И. В. Еркомашвили, 2004, Т. А. Крюкова, 2004, И. В. Коротков, 2004, М. Н. Бурмистрова, 2004, Л. В. Загрекова, 2007, Т.А. Михайлова, Л.М. Кравцова 2007, Д.И Воронин, 2007, 2009, О.В. Романова, 2012, Е.В. Кетриш, 2013, А.А. Орлов, С.В. Пазухина, 2014):

Այդ առումով ուսանողների պատրաստվածության հարցը միշտ եղել և մնում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համապատասխան մասնագետների ուշադրության կենտրոնում (Т.А. Михайлова, 2003, В.А. Багина, 2005, В.С.Володина, 2007, Л.В. Михайлова, 2007):

Գրական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա առանձնացվել են մանկավարժական գործունեության համար անհրաժեշտ ուսանողների տեսական և գործնական պատրաստության կողմերը: Այդ նպատակով կազմակերպվել է փորձագիտական հարցում՝ բացահայտելու երրորդ կուրսի ուսանող-պրակտիկանտների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների տիրապետումը մանկավարժական գործունեության ընթացքում:

Անցկացվել է հարցաթերթիկային հարցում՝ 47 փորձագետների շրջանում մինչ-մանկավարժական պրակտիկան: Փորձագետներին ընտրելիս հաշվի ենք առել նրանց գիտական աստիճանը և կոչումը, աշխատանքային ստաժը՝ իբրև մեթոդիստ: Որպես

փորձագետ ընտրվել են ՀՖԿՍՊԻ-ի 12 պրոֆեսորներ, 11 գիտությունների թեկնածու և դոցենտներ, 24 մեթոդիստ և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ, որոնց միջին աշխատանքային ստաժը կազմել է 18,6 տարի:

Հարցաթերթիկի առաջին բաժնի հարցերը նվիրված են կազմակերպչական խնդիրներին, երկրորդ բաժինը՝ մասնագիտական կարողություններին, երրորդը՝ բարելավման ուղիներին:

Հարցման արդյունքում բացահայտվեց, որ փորձագետների միայն 29,7 %-ն է բարձր գնահատել մանկավարժական պրակտիկայի գործընթացի կազմակերպման մակարդակը, 67,6 %-ը՝ միջին, 2,7 %-ը՝ ցածր:

Հետաքրքրիր է այն փաստը, որ դպրոցի տնօրենների 75,7%-ը մանկավարժական պրկատիկայի կազմակերպումը գնահատել են լավ:

Հարցումը բացահայտեց, թե, արդյոք դպրոցում պայմաններ կան մանկավարժական պրակտիկան արդյունավետ կազմակերպելու համար: Ստացվեցին հետևյալ արդյունքները՝ փորձագետների 44,1%-ը գտնում է, որ այո, կան համապատասխան պայմաններ, իսկ ըստ 55,9%-ի՝ պայմանները լիովին չեն ապահովում:

Փորձագետների 61%-ը գտնում են, որ մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ հրատարակված գրականությունը, մեթոդական ուղեցույցները, հոդվածները և նյութերը մասամբ է բավարարում, 31%-ը՝ բավարարում է, իսկ 8%-ը գտնում է, որ չի բավարարում:

Մեզ համար հետաքրքիր էր պարզաբանել, թե ծրագրի որ բաժինների վերաբերյալ կցանկանային հրատարակել մեթոդական նյութեր: Արդյունքում պարզվեց, որ փորձագետների 46%-ը գտնում են, որ այն անհրաժեշտ է փաստաթղթերի վարման, 15%-ը շարժախաղերի, 13%-ը մարմնամարզության, 8%-ը՝ լողի և մարզախաղերի համար, 5%-ը՝ ըմբշամարտի և 3%-ը՝ դահուկային պատրաստության: Հարցման արդյուքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հասունացել է այն հարցը, որ անհրաժեշտ է մշակել գիտականորեն հիմնավորված մանկավարժական պրակտիկայի մեթոդական ձեռնարկ:

Աղյուսակ 1

Ուսանողների մասնագիտական կարողությունների տիրապետման մակարդակը ըստ փորձագետների ( % )

| N | Հիմնական կարողությունները | Բարձր | Միջին | Ցածր |
|---|---|---|---|---|
| 1 | Բացատրում | --- | 38,3 | 61,7 |
| 2 | Ցուցադրում | --- | 59,6 | 40,4 |
| 3 | Բացատրման և ցուցադրման զուգակցում | --- | 55,3 | 44,7 |
| 4 | Տեսական գիտելիքների հաղորդում | --- | 31,9 | 68,1 |
| 5 | Տեղեկությունների հաղորդում՝ գիտելիքների հիմունքներից և առողջ ապրելակերպից | --- | 29,8 | 70,2 |
| 6 | Տերմինաբանության տիրապետում | --- | 38,3 | 61,7 |
| 7 | Ուսուցանվող վարժությունների տեխնիկայի տիրապետում | --- | 51,1 | 48,9 |
| 8 | Կանխագուշակել դժվարությունները մինչ դասի խնդիրների իրականացումը | --- | 29,8 | 70,2 |
| 9 | Օգնության և ապահովվության եղանակների տիրապետում | --- | 38,3 | 61,7 |
| 10 | Անհատական մոտեցման կարողության իրականացում | --- | 31,9 | 68,1 |
| 11 | Բեռնվածության չափավորում | --- | 53,2 | 46,8 |
| 12 | Անհատական, խմբային և ընդհանուր սխալների պարզաբանում | --- | 25,5 | 74,5 |
| 13 | Սխալների բացահայտում և ուղղում | --- | 31,9 | 68,1 |
| 14 | Գնահատում | --- | 29,8 | 70,2 |
| 15 | Կազմակերպչական կարողությունների դրսևորում | --- | 48,9 | 51,1 |
| 16 | Հսկում | --- | 31,9 | 68,1 |
| 17 | Միջառարկայան կապերի կիրառում | --- | 14,9 | 85,1 |
| 18 | Աշակերտների գործունեության ձևերի ակտիվացում | --- | 53,2 | 46,8 |
| 19 | Դաստիարակչական աշխատանքների իրականացում | --- | 19,2 | 80,8 |

Փորձագետներին առաջադրվեց գնահատել ուսանողների մասնագիտական կարողությունների տիրապետման մակարդակը (աղյուսակ 1)։ Հարցման արդյունքների

վերլուծությունը ցույց տվեց, որ նշված կարողություններից ոչ մեկը փորձագետների կողմից չի գնահատվել բարձր, ինչը չափազանց մտահոգիչ է: Փորձագետների կարծիքով ուսանողների միայն 55,3%-ը բացատրման և ցուցադրման զուգակցման կարողությունը կարող են ցուցաբերել միջին մակարդակով, իսկ 44,7%-ը՝ ցածր: Հարցումը բացահայտեց, որ ուսանողների 61,7%-ը օգնության և ապահովվության եղանակների տիրապետման համար ունեն ցածր մակարդակ: Ըստ փորձագետների՝ ուսանողների մեծ մասը դժվարանում է անհատական մոտեցում ցուցաբերել, չափավորել բեռնվածությունը վարժությունների կատարման ժամանակ, բացահայտել սխալները և դրանց ուղղման մեթոդիկան: Ուշագրավ է այն փաստը, որ փորձագետների գերիշխող մասը (80,8%) նշում է, որ ուսանողների մոտ թույլ է ձևավորված դաստիարակչական աշխատանքներն իրականացնելու կարողությունը: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն փաստի վրա, որ ուսանողները դժվարանում են ֆիզիկական վարժությունների և առողջ ապրելակերպի ուսուցման գործընթացում հաղորդել տեսական գիտելիքներ, համապատասխանաբար՝ 68,1% և 70,2%:




Տրամագիր 2. Ըստ փորձագետների՝ ուսանողների կարողությունները ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման վերաբերյալ (%)

Փորձագետների կարծիքների վերլուծությունը բացահայտեց ուսանողների ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու կարողությունները: Այսպես՝ իրենց խմբում ընդգրկված ուսանողների 34,1%-ը կարող են կազմակերպել սպորտլանդիաներ, 24,7%-ը՝ ֆիզկուլտդադարներ, 18,1%-ը՝ նախապարապմունքային մարմնամարզություն, 11,4%-ը՝ կրոսավազքեր և էքսկուրսիաներ (տրամագիր 2):

Հարցման արդյուքների վերլուծությունը ցույց է տալիս, ուսանողների կարողությունների ցածր մակարդակը ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների իրականացման գործում: Այն էլ այն դեպքում, որ ներկա ժամանակաշրջանում շատ է կարևորվում այդ աշխատանքների կազմակերպումը և անցկացումը (И.А. Коновалова, А.М. Кузьмин, 2011):

Հաջորդ հարցն ուղված էր բացահայտելու, թե ուսանողներն ինչպիսի առողջարարական խնդիրներ պետք է լուծեն իրենց ամրացված դասարաններում: Արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը՝ փորձագետների 63%-ը նշել է, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կեցվածքի ձևավորման վարժությունների կիրառման վրա, 26,1 %-ի կարծիքով հարկավոր է իրականացնել կոփման միջոցներ, իսկ 10,9%-ը կարծում է, որ պետք է իրականացնել հարթաթաթության կանխարգելման վարժություններ: Հետևաբար, հանրակրթական դպրոցում անհրաժեշտ է մանկավարժական պրակտիկայի ընթացքում շեշտադրել ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների իրականացումը:

Սոցոլիոգիական հարցման միջոցով բացահայտվեց ուսանողների կարողությանները տարբեր մարզաձևերից մրցումներ կազմակերպելու և մրցավար լինելու պատրաստվածության վերաբերյալ: Այսպես՝ փորձագետների կարծիքով ֆուտբոլից 68 %-ը կարող են կազմակերպել մրցումներ, 57 %-ը լինել մրցավարներ, վոլեյբոլից 36 %-ը կազմակերպել մրցումներ, իսկ 32%-ը հանդես գալ որպես մրցավարներ, բասկետբոլից համապատասխանաբար՝ 32 %-ը կազմակերպել մրցումներ, 27 %-ը կատարել մրցավարություն (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Փորձագետների կարծիքը ուսանողների՝ մրցումներ կազմակերպելու և մրցավար լինելու կարողությունների վերաբերյալ (%)

| N | Մարզաձևեր | Մրցումներ կազմակերպելու կարողություն | Մրցավար լինելու կարողություն |
|---|---|---|---|
| 1. | Աթլետիկա | 12 | 10 |
| 2. | Բասկետբոլ | 32 | 27 |
| 3. | Վոլեյբոլ | 36 | 32 |
| 4. | Հանդբոլ | 8 | 5,5 |
| 5. | Սեղանի թենիս | 34 | 28 |
| 6. | Շախմատ | 23 | 18 |
| 7. | Ֆուտբոլ | 68 | 57 |

Անկասկած, դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում մարզական-զանգվածային միջոցառումների կազմակերպումը կարևորագույն օղակներից է և մեծ հետաքրքրություն է առաջացնում աշակերտների շրջանում: Բնականաբար, ուսանողները պետք է պատրաստ լինեն՝ իրականացնելու այդ աշխատանքները:

Գրական աղբյուրների ուսումնասիրությունը և հարցման արդյունքների վերլուծությունը թույլ են տալիս նշել այն բազում գործոնները, որոնցով պայմանավորված են մանկավարժական պրակտիկայի կազմակերպման արդյունավետությունը: Փորձագետների 37,7%-ի կարծիքով դա պայմանավորված է դպրոցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դրվածքից, 23,4%-ը գտնում է՝ որ ուսանողների նախնական պատրաստվածությունից, 22,1%-ը՝ մեթոդիստների պրոֆեսիոնալ պատրաստվածությունից, և 16,9%-ը կարծում է՝ դպրոցի նյութատեխնիկական պայմաններից: Ըստ փորձագետների կարծիքի՝ մանկավարժական պրակտիկայի կատարելագործման ուղիներից են՝ ուսանողների ինքնակրթությունը և ինքնուրույն աշխատանքների ակտիվացումը: Այդ կարծիքին են փորձագետների 69,7%-ը:

Մեր կարծիքով մանկավարժական պրակտիկայի արդյունավետ անցկացման համար անհրաժեշտ է ժամանակակից պահանջներին համապատասխան ծրագիր, մեթոդիստների համար ուսումնական ձեռնարկ, երիտասարդ մեթոդիստների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ուսումնական պրակտիկայի կազմակերպման կատարելագործում:

## 2.2.Ուսանողների մանկավարժական պրակտիկայի պատրաստվածության աստիճանի ինքնագնահատումը

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է կարողանա կիրառել ուսումնառության տարիներին կուտակած անձնական փորձը, հսկել իր գործողությունների արդյունավետությունը և այն ուղղել ուսումնական գործընթացին:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ներկայիս շրջանավարտը պետք է տիրապետի այնպիսի մասնագիտական կոմպետենտության, որի միջոցով ինքնուրույն կլուծի մանկավարժական գործունեության ժամանակ առաջ եկած բազմաթիվ մասնագիտական խնդիրները:

Մանկավարժական պրակտիկան համարվում է ուսանողների բազային պատրաստության կարևոր փուլը և ձևը, որտեղ ուսանողները, ի տարբերություն նախորդ կուրսի, պետք է ինքնուրույն կարողանան լուծել մանկավարժական գործունեության տարբեր խնդիրներ, մասնավորապես, ակտիվ մասնակցություն ունենան հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացներին և իրենց նախաձեռնությամբ յուրահատուկ մոտեցումներով հարստացնեն այդ աշխատանքները:

Աշխատանքի այս փուլում ներկայացված են սոցիլոգիական հարցման արդյունքում բացահայտված Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանողների պրոֆեսիոնալ մանկավարժական գիտելիքների և կարողությունների մակարդակը մինչ պրակտիկան:

Գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մանկավարժական պրակտիկայի արդյունավետությունը պայմանավորված է ուսումնասիրության ընթացքում ուսանողների յուրացրած տեսական գիտելիքներից, կարողություններից և հմտություններից (С.Б. Елканов, 1989, Е.В. Кузьмичева, 1990, А.Н. Двоеглазов, 1991, Т.П.Лигай, 1992, В.Л. Горленко, 1996, Н.М.Зверева, 2001, М.М. Садыков,2002, С.Ф. Бурухин, 2002, И.М. Бутин, 2002): Դիտումները ցույց տվեցին, որ ուսանողները պրակտիկայի ընթացքում հաճախ չեն կարողանում ուսանողի (սովորողի) դերից անմիջապես անցնել ուսուցչի (սովորեցնողի) դերի:

Մասնագետներին (Ю. Г Григорян, Л. Г. Арутюнян, 1994, Ա.Ա. Չատինյան, 2012) առանձնակի անհանգստացնում է այն փաստը, որ ուսանողների 15,3%-ը չեն տիրապետում առանձին մանկավարժական կարողությունների և հմտությունների, դեռ ավելին՝ 41%-ն ունեն պրոֆեսիոնալ պատրաստվածության ցածր մակարդակ:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի երրորդ կուրսի 220 ուսանողների շրջանում անցկացրած հարցումը ցույց տվեց, որ նրանց գերակշռող մասը՝ 82,9%-ը, բարձր են գնահատում մանկավարժական պրակտիկայի դերն իրենց պրոֆեսիոնալ պատրաստության գործում:

Հարկ է նշել, որ հարցման մասնակիցների 31,7%-ն ունեն գերազանց, 48,1%-ը՝ լավ, իսկ 20,3%-ը՝ բավարար առաջադիմություններ:

Հարցվողների 40,3%-ն ունեն միջազգային կարգի սպորտի վարպետի, 11,5%-ը՝ սպորտի վարպետի, 5,2%-ը՝ սպորտի վարպետի թեկնածուի, 16,8%-ը՝ 1-ին կարգայինի, 7,3%-ը՝ 2-րդ և 2,6%-ը՝ 3-րդ կարգայինի որակավորում:

Հատկանշական է այն փաստը, որ ուսանողների 69,5%-ը պրակտիկայի ընթացքում նախապատվությունը տալիս է աշխատել միջին դպրոցի աշակերտների, 18,3%-ը՝ ավագ դպրոցականների, 12,2%-ը՝ կրտսեր դպրոցականների հետ:

Հարցումը բացահայտեց, որ հարցվողների 43,9%-ը գտնում են, որ մանկավարժական պրակտիկայի լավ ընթացքը պայմանավորված է դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դրվածքից, 40,3%-ը՝ մեթոդիստների կրթվածության և բարձր պատրաստվածության մակարդակից, 15,8%-ի կարծիքով՝

դպրոցի նյութատեխնիկական բազայից: Ուսանողների կարծիքն այս հարցում հիմնականում համընկնում է փորձագետների կարծիքի հետ:

Ինքնագնահատման միջոցով բացահայտվել են ուսանողների պրոֆեսիոնալ պատրաստվածության տեսական, գործնական, հոգեբանական կարևոր բաղադրիչները: Ուսանողների գիտելիքների և կարողությունների ձևավորման աստիճանը որոշվել է երեք մակարդակներով՝ համեմատաբար լավ, բավարար, համեմատաբար վատ: Արդյունքների վերլուծությունը բացահայտեց, որ ուսանողների 73,6%-ն իրենց տեսական և գործնական գիտելքները և կարողությունները գնահատել են համեմատաբար լավ, 23,9%-ը՝ բավարար և 2,5%-ը՝ համեմատաբար վատ: Հոգեբանական գիտելիքները և կարողությունները համապատասխանաբար գնահատել են 60,9%-ը՝ համեմատաբար լավ, 36,9%-ը՝ բավարար և 2,2%-ը՝ համեմատաբար վատ:

Անհանգստացնող է այն փաստը, որ ուսանողների միայն 16,5%-ն է իր հոգեբանական պատրաստվածությունը գնահատել լավ, 52%-ը՝ բավարար և 42,5- %-ը՝ վատ: Նման պարագայում անհրաժեշտություն է առաջանում, որ «Հոգեբանություն» առարկայի դասավանդման ժամանակ առանձնակի ուշադրություն դարձնել ուսանողների մանկավարժական պրակտիկայի պատրաստության հարցերին:

Հարցման միջոցով բացահայտվեց ուսանողների պատրաստվածությունը դաս անցկացնելիս՝ հարցվողներ 58,1%-ը՝ իրենց պատրաստվածությունը գնահատել են լավ, 4,4%-ը՝ վատ և 37,6%-ը՝ բավարար:

Անշուշտ, մեծ կարևորություն ունի՝ պարզաբանել ուսանողների պատրաստվածությունը՝ դասավանդելու ֆիզիկական կուլտուրայի ծրագրի բազային և ընտրովի ուսումնական նյութը:

Ըստ ուսանողների կարծիքի՝ իրենց միայն 65,3%-ը կարող են դասավանդել մարմնամարզության բաժինը, 61,4%-ը՝ աթլետիկայի, 82,5%-ը ՝ շարժախաղերի, 59,2%-ը՝ բասկետբոլի և 69,3%-ը՝ վոլեյբոլի: Միանգամայն այլ պատկեր ենք ստացել ընտրովի ուսումնական նյութի դասավանդման վերաբերյալ: Հարցումից պարզվեց, որ լող ուսուցման դաս կարող են անցկացնել հարցվողների 15,4%-ը, 26,9%-ը՝ գոտեմարտի,

5,6%-ը՝ դահուկային պատրաստությունից և  24,3%-ը՝ ուժային պատրաստությունից: Ստացված արդյունքերի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ուսանողների մեծամասնությունը ընտրովի ուսումնական նյութը պատրաստ չէ իրականացնելու (տրամագիր 3):




Տրամագիր 3. Ուսանողների պատրաստվածությունը ծրագրի բաժինները դասավանդելիս (%)

Հարցման միջոցով բացահայտվեց, որ պրակիկայի ընթացքում ուսանողների ընդամենը 20,9%-ը կարող են կազմակերպել սպորտլանդիաներ, 6,5%-ը՝ համայնքային խաղեր, 12,9%-ը՝ կրոսավազքեր, 4,4%-ը՝ շարժախաղեր մեծ դասամիջոցներին, 7,2%-ը՝ ֆիզիկական պատրաստվածության գնահատում, 10,9%-ը՝ արշավներ, 20,4%-ը՝ նախապարապմունքային մարմնամարզություն, 4,1%-ը ֆիզկուլտդադարներ, 12,7%-ը՝ ցերեկույթներ (տրամագիր 4):

Ստացված արդյունքները համընկնում են գրականության տվյալների հետ (Ю. Г. Григорян, А.Г. Арутюнян, 1994, Т.В. Бондарчук, 2011), որտեղ նշվում են ուսանողների պատրաստվածության ցածր մակարդակը՝ իրականացնելու ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական-զանգվածային միջոցառումներ:

Հարցման միջոցով բացահայտվեց մինչմանկավարժական պրակտիկան ուսանողների մանկավարժական կարողությունների ինքնագնահատումը երեք

մակարդակներով՝ բարձր, միջին և ցածր (արտահայտված՝ տոկոսներով), որոնց վերլուծումը և ամփոփումը ներկայացված են 3-րդ աղյուսակում:




Տրամագիր 4. Մինչմանկավարժական պրակտիկան ուսանողների կարծիքը մարզական և ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման կարողությունների ձևավորման վերաբերյալ (%)

Ամփոփելով և վերլուծելով ուսանողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները՝ կարող ենք նշել հետևյալը.

- Գոհացուցիչ է այն փաստը, որ ուսանողների մեծամասնությունը կարևորում է պրակտիկայի դերն ու նշանակությունն իրենց պրոֆեսիոնալ պատրաստության հարցերում:
- Բացահայտվեց, որ ուսանողները դժվարանում են ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական-զանգվածային աշխատանքներ իրականացնելիս:
- Անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել համալիր միջոցներ՝ ապահովելու ուսանողների բազմակողմանի պատրաստությունը մանկավարժական պրակտիկային:

Ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորման մեխանիզմը ուսումնասիրելու նպատակով տրամաբանությունը թելադրում էր պրակտիկայից հետո կազմակերպել հարցում ուսանողների շրջանում:

Այն հնարավորություն տվեց բացահայտելու ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների տիրապետման աստիճանը պրակտիկայի արդյունքում, ինչպես նաև ի հայտ բերել թերություններն ու նպատակաուղղված շտկել:

Հարցման միջոցով բացահայտվեց պրակտիկայի ժամանակ ուսանողներին հանդիպած դժվարությունները: Այսպես՝ հարցվողների 60,9%-ը պատասխանել են, որ մանկավարժական պրակտիկայի ժամանակ ունեցել են մասամբ դժվարություններ, 17,3%-ը՝ կազմակերպչական հարցերում են ունեցել դժվարություններ, 11,2%-ը՝ մեթոդական և 10,6%-ը՝ տեսական գիտելքիների հարցում (տրամագիր 5):




Տրամագիր 5. Ուսանողների դժվարությունների պատկերը մարզական միջոցառումների կազմակերպման ժամանակ (%)

Հարցման արդյունքների վերլուծությունը բացահայտեց ուսանողների ինքնագնահատականը մասնագիտական կարողությունների դրսևորման վերաբերյալ: 3-րդ աղյուսակից հստակ երևում է, որ ուսանողների մանկավարժական կարողություններում նկատվում են տեղաշարժեր:

Աղյուսակ 3

Ուսանողների կարծիքը մանկավարժական կարողությունների մակարդակի ձևավորման վերաբերյալ (%)

| Մակարդակները | Բացատրման | Ցուցադրման | Բացատրման և ցուցադրման զուգակցման | Տերմինաբանության տիրապետում | Ուսուցանվող վարժությունների տեխնիկայի տիրապետում | Կանխագուշակել դժվարությունները մինչ դասի խնդիրների իրականացումը | Օգնության և ապահովության եղանակների տիրապետում | Անհատական մոտեցման կարողության իրականացում | Վարժությունների կատարման ժամանակ բեռնվածության չափավորում | Անհատական խմբային և ընդհանուր սխալների պարզաբանում | Սխալների բացահայտման և ուղղում | Գնահատում | Կազմակերպչական կարողությունների տիրապետում | Հսկում | Միջառարկայական կապերի իրականացում | Աշակերտների գործունեության ձևերի ակտիվացում | Դաստիարակչական աշխատանքների իրականացում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Մինչ պրակտիկան** | | | | | | | | | | | | | | | | | |
| **Բարձր** | 32,5 | 47,8 | 40,5 | 33,9 | 43,2 | 40,3 | 40,5 | 58,2 | 38,4 | 42,3 | 50,2 | 21,4 | 29,1 | 29 | 27,7 | 42,7 | 35,2 |
| **Միջին** | 58,2 | 43,2 | 53,2 | 50,5 | 49,8 | 51,4 | 55.6 | 39,6 | 52,1 | 49,3 | 45,3 | 70,8 | 58,6 | 58,4 | 61 | 48,9 | 54,7 |
| **Ցածր** | 9,3 | 8,9 | 6,3 | 15,6 | 7 | 8,3 | 3,9 | 2,1 | 9,5 | 8,4 | 4,4 | 7,8 | 12,3 | 12,7 | 11,3 | 8,4 | 10,1 |
| **Պրակտիկայից հետո** | | | | | | | | | | | | | | | | | |
| **Բարձր** | 60,8 | 68,4 | 60,2 | 44,8 | 52,5 | 50,4 | 49,8 | 63,5 | 41,1 | 48,8 | 65,3 | 25,7 | 55,3 | 41,2 | 39,4 | 58,6 | 38,7 |
| **Միջին** | 37,4 | 29,4 | 36 | 46,1 | 42,4 | 46,5 | 48 | 35,1 | 51 | 46,3 | 33,3 | 68,4 | 43,6 | 51 | 53,8 | 36,9 | 55,9 |
| **Ցածր** | 1,8 | 1,2 | 3,7 | 9,1 | 5,1 | 3,1 | 2,2 | 1,2 | 7,8 | 4,9 | 1,4 | 5,8 | 1,1 | 7,8 | 6,9 | 4,5 | 5,4 |

Այսպես՝ բացատրման կարողությանը բարձր են գնահատել ուսանողների 60,8%-ը, միջին՝ 37,4%-ը և ցածր՝ 1,8%-ը: Ցուցադրման կարողությանը համապատասխանաբար բարձր՝ 68,4%-ը, միջին՝ 29,4%-ը և ցածր՝ 1,2%-ը, օգնության և ապահովության եղանակների տիրապետմանը՝ բարձր՝ 40,5%-ը, միջին՝ 55,6%-ը և ցածր՝ 3,9%-ը, անհատական մոտեցման կարողության իրականացմանը՝ բարձր՝ 58,2%-ը, միջին՝ 39,6%-ը և ցածր՝ 2,1%-ը: Վարժությունների կատարման ժամանակ բեռնվածության չափավորմանը՝ բարձր՝ 38,4%-ը, միջին՝ 52,1%-ը և ցածր՝ 9,5%-ը: Սխալների բացահայտմանն ու ուղղմանը՝ բարձր՝ 65,3%-ը, միջին՝ 33,3%-ը և ցածր՝ 1,4%-ը: Գնահատման կարողության տիրապետմանը՝ բարձր՝ 61,7%-ը, միջին՝ 36,5%-ը և ցածր՝ 1,8%-ը: Կազմակերպչական կարողությունների դրսևորման կարողության տիրապետմանը՝ բարձր՝ 55,3%-ը, միջին՝ 43,6%-ը և ցածր՝ 1,1%-ը: Դաստիարակչական աշխատանքների իրականացմանը՝ բարձր՝ 58%-ը, միջին՝ 35%-ը և ցածր՝ 7,1%-ը (աղյուսակ 3): Ակնհայտորեն նկատելի է, որ ուսանողները գերագնահատել են իրենց կարողությունները, որի հետ լիովին համամիտ էին փորձագետները:

Դրա հետ մեկտեղ ուշագրավ է այն փաստը, որ պրակտիկայից հետո ուսանողները դեռևս հանդիպում են դժվարությունների:

Հաջորդ հարցն ուղղված էր բացահայտելու, թե ուսանողներն ինչպիսի ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ են կազմակերպել մանկավարժական պրակտիկայի ընթացքում: Հարցումը հնարավորություն տվեց բացահայտել հետևյալ արդյունքները՝ ուսանողների 9,8%-ը՝ կազմակերպել են ֆիզկուլտդադարներ, 29,1%-ը՝ կեցվածքի ձևավորման, 5,3%-ը՝ առողջության նվիրված տոներ, 4,1%-ը՝ շարժախաղեր, ֆիզիկական վարժություններ երկարացված դասամիջոցներին և հարթաթաթության կանխարգելման միջոցառումներ:

Հարցումը բացահայտեց, որ ուսանողների գերակշռող մեծամասնությունը պրակտիկայի ընթացքում չի հանձնարարում տնային առաջադրանքներ: Դա հաստատեց, որ այսօր դեռևս թույլ է տնային առաջադրանքների հանձնարարման մեթոդիկան և դրա կարևորության աստիճանի գիտակցումը աշակերտների շրջանում: Այն հարցին, թե ինչպես էին վերաբերվում աշակերտները Ձեր կողմից անցկացված

դասերին, հարցվողների մեծամասնությունը տվել է դրական պատասխան (85,3%): Դա հաստատում է նախկինում ունեցած այն փաստը, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկան դպրոցականների համար ավանդաբար եղել է սիրված առարկաներից մեկը:

Այսպիսով՝ ուսանողների շրջանում անցկացված հարցումը ցույց տվեց նրանց մանկավարժական կարողությունների ձևավորման շարժընթացը մանկավարժական պրակտիկայի ընթացքում: Այս ամենը ցույց է տալիս, թե մեթոդիստները մանկավարժական պրակտիկայի ընթացքում, որ հարցերի վրա պետք է ուշադրություն դարձնեն:

## 2.3. Դպրոցականների կարծիքը ուսանող-պրակտիկանտների մանկավարժական գործունեության վերաբերյալ

Մանկավարժական պրակտիկայի ողջ ժամանակահատվածում աշակերտների (մանկավարժական գործունեության հիմնական սուբյեկտը և միաժամանակ օբյեկտը А.И. Липкина, 1976, Л.И. Мнацаканян, 1991) կարծիքի ուսումնասիրությունը ուսանող-պրակտիկանտների գործունեության վերաբերյալ հնարավորություն կընձեռի հետադարձ կապի միջոցով բացահայտել մանկավարժական պրակտիկայի ընթացքը և դրա օպտիմալացման ուղիները:

Կազմակերպվել և անցկացվել է հարցաթերթիկային հարցում Երևան քաղաքի թիվ 57, 62, 77, 78, 90, 130 և 196 միջնակարգ դպրոցների 915 աշակերտների շրջանում, որոնցից 151-ը՝ 5-րդ, 145-ը՝ 6-րդ, 165-ը՝ 7-րդ, 155-ը՝ 8-րդ, 152-ը՝ 9-րդ և 147-ը՝ 10-րդ դասարանների աշակերտներ են: Հարցում անցկացնելիս դասարանների ընտրության հարցում հաշվի ենք առել այն դպրոցները, որոնք վերջին տարիներին ընդգրկված են եղել մանկավարժական պրակտիկայում:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողներն անցկացնում են ֆիզիկական կուլտուրայի դասեր, սեկցիոն պարապմունքներ, կազմակերպում և

անցկացնում են ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ և մարզական-զանգվածային աշխատանքներ:

Հանրակրթական դպրոցի աշակերտների շրջանում անցկացված հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի տղաների 36,7%-ը և աղջիկների 47,4%-ը, 6-րդ դասարանի տղաների 32,8%-ը և աղջիկների 48%-ը դրական են արտահայտվել իրենց դպրոցում մանկավարժական պրակտիկայի անցկացման վերաբերյալ: Բացահայտվել է նաև հետևյալ միտումը՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարանների աղջիկներն ավելի են ցանկանում, որ իրենց դպրոցում անցնեն մանկավարժական պրակտիկա, քան տղաները: Սակայն, 9-րդ և 10-րդ դասարաններում պատկերը փոխվում է. այսպես՝ եթե 9-րդ դասարանի աղջիկների 26,5%-ն է դրական արտահայտվել, ապա 10-րդ դասարանում համապատասխանաբար՝ տղաների 47,3%-ը, իսկ աղջիկների՝ 21%-ը: Մինչդեռ, 6-րդ դասարանում դրական են արտահայտվել տղաների 32,8%-ը, աղջիկների 48%-ը (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Աշակերտների վերաբերմունքն իրենց դպրոցում անցկացվող մանկավարժական պրակտիկային (ըստ դասարանների համեմատական վերլուծության, %)

| Հարցի բովանդակու-թյունը | Պատասխանի տարբերակ-ները | Դասարաններ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | V | VI | VII | VIII | IX | X |
| | | n =151 | n =145 | n =165 | n =155 | n =152 | n =147 |
| Ինչպես եք վերաբերվում, որ Ձեր դպրոցում «Ֆիզկուլտուրա» առարկայից ՀՖԿՍՊԻ ուսա-նողներն անցնում են պրակտիկա | դրական | 84.1 | 80.4 | 89.8 | 59.9 | 65.5 | 68.3 |
| | բացասական | 9.4 | 10.4 | 3.8 | 18.9 | 24.1 | 3.9 |
| | անտարբեր եմ | 6.3 | 8.5 | 6.1 | 21.2 | 10 | 27.5 |

Հարցումը բացահայտեց այն միտումը, որ դպրոցում մարզական կյանքը ուսանողների մուտք գործելով փոխվում է, հետևաբար, հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ 5-րդ դասարանի աշակերտների 84,1%-ը, 6-րդ դասարանի աշակերտների 77,9%-ը, 7-րդ դասարանի աշակերտների 77,9%-ը, 8-րդ դասարանի՝ 42,6%-ը, 9-րդ դասարանի 64,5%-ը և 10-րդ դասարանի 37,8%-ը գտնում են, որ այն ակտիվանում է:

Հարցման միջոցով բացահայտվեց, թե ուսանողները պրակտիկայի ընթացքում ինչ մարզական միջոցառումներ են կազմակերպել: Այսպես՝ աղյուսակից հստակ երևում է, որ 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում ուսանողները կազմակերպել են մրցումներ, համապատասխանաբար՝ 34,5%, 34,4%, 43,4%, 60,7%, 61,2% և 63,2%, սպորտլանդիաներ՝ 46,5%, 46%, 38,5%, 21,4%,14,2% և 11,2% և այլն (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Ուսանողների կողմից կազմակերպված մարզական-զանգվածային միջոցառումները

(ըստ դասարանների համեմատական վերլուծության % )

| Հարցի բովանդակու-թյունը | Պատասխանի տարբերակ-ները | Դասարաններ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | V | VI | VII | VIII | IX | X |
| | | n =151 | n =145 | n =165 | n =155 | n =152 | n =147 |
| Ինչ մարզական զանգվածային միջոցառումներ են կազմա-կերպվել ուսանողների կողմից | մրցումներ | 34.5 | 34.4 | 43.4 | 60.7 | 61.2 | 63.2 |
| | սպորտլան-դիաներ | 46.5 | 46 | 38.5 | 21.4 | 14.2 | 12.2 |
| | զրույցներ | 12 | 13.1 | 12.3 | 8.6 | 10 | 21 |
| | օլիմպիական օրեր | 5.7 | 5.1 | 3.3 | 4.6 | 7.6 | 3.3 |
| | արշավներ | 0.8 | 1.4 | 1.9 | 3.9 | 2.4 | 0 |

Հարցումը ցույց տվեց, որ ուսանողները լիարժեք ընդգրկված չեն իրենց ամրացված դասարանի ընդհանուր ուսումնադաստիարակչական աշխատանքերին: Այսպես՝ 5-րդ դասարանում՝ 51,9%, 6-րդում՝ 51,1%, 7-րդում՝ 41,1%, 8-րդում՝ 68,8%, 9-րդ և 10-րդ դասարաններում՝ 56,6% և 64,4%: Այս փաստը հաստատվեց նաև մյուս ռեսպոդենտների հարցման ժամանակ: Հետևաբար, մանկավարժական պրակտիկայի

ընթացքում մեթոդիստները պետք է ակտիվացնեն ուսանողների մոտ այդ ուղղությամբ կատարվող գործունեությունը և նպաստեն դաստիարակչական աշխատանքների իրականացման կարողությունների ձևավորմանը:

Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգում իրենց ուրույն տեղն ունեն ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումները (Ռ.Տ. Մելիքսեթյան, 1970, Г.П. Богданов,1985): Հետազոտության ընթացքում հետաքրքիր էր պարզաբանել աշակերտների կարծիքը ուսանողների կողմից պրակտիկայի ընթացքում կազմակերպվող ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների վերաբերյալ: Պարզվեց հետևյալը. 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների աշակերտների 47,9% - 58,8%-ը պատասխանել են, որ, այո՝ կազմակերպվում են նման աշխատանքներ, սակայն բարձր դասարանցիների միայն 31,1 – 43,2%-ն են դրական արտահայտվել: Հատկանշական է այն փաստը, որ 7-րդ դասարանի աղջիկների 33,8%-ը, իսկ 10-րդ դասարանում միայն 7,7%-ն է նշել, որ ուսանողները կազմակերպում են վերոհիշյալ միջոցառումները: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որպեսզի ավագ դպրոցականներն ավելի շատ ընդգրկվեն ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներին (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Ուսանողների կողմից կազմակերպված մարզաառողջարարական միջոցառումները

(ըստ դասարանների համեմատական վերլուծության % )

| **Հարցի բովանդակությունը** | **Պատասխանի տարբերակները** | **Դասարաններ** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **V** | **VI** | **VII** | **VIII** | **IX** | **X** |
| | | **n =151** | **n =145** | **n =165** | **n =155** | **n =152** | **n =147** |
| **Պրակտիկայի ընթացքում ուսանողները մարզաառողջարարական միջոցառումներ կազմակերպել են** | **այո** | 47.9 | 48.8 | 58.8 | 31.1 | 43.2 | 35.4 |
| | **ոչ** | 51.7 | 51.2 | 41.1 | 68.7 | 56.5 | 64.6 |
| | **եթե այո՝ապա ինչպիսի** | | | | | | |
| | **կոփում** | 30.1 | 30.8 | 57.8 | 51.7 | 69.1 | 52.4 |
| | **կեցվածքի ձևավորում** | 23 | 52.3 | 30.5 | 40.3 | 25.5 | 33.1 |
| | **Հարթաթաթության կանխարգելում** | 23.4 | 10.2 | 3.3 | 3.5 | 2.5 | 5.7 |

Հարցման արդյունքերը վկայում են, որ դասարանից դասարան դիտվում են ուսանողների կողմից իրականացվող ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների նվազման միտում:

Երեխաների ընդգրկվածությունը ուսանողների կողմից հանձնարարված տնային առաջարդրանքների տարատեսակ գործընթացներին՝ ավելի մանրամասն ներկայացված է 5-րդ հավելվածում:

Պրակտիկանտ-աշակերտ փոխհարաբերությունների արդյունքները ներկայացված են 6-րդ հավելվածում:

Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը պարզորոշ ցույց է տալիս աշակերտների վերաբերմունքն իրենց դպրոցում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտի ուսանողների կողմից անցկացված մանկավարժական պրակտիկային:

Այսպիսով՝ երեք խումբ հարցվողների՝ մեթոդիստների, ուսանողների և դպրոցականների հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ուսանողների պատրաստության մակարդակը չի համապատասխանում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի առջև դրված ժամանակակից պահանջներին: Ի հայտ եկած պատրաստության թերի կողմերի շտկման նպատակով անհրաժեշտ է մշակել նոր մոտեցումներ, մեխանիզմներ՝ մասնագիտական կարողությունների ձևավորման համար: Անհրաժեշտություն է առաջացել մշակել ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և անցկացման նոր ծրագիր: Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ ուսանողների պատրաստության աստիճանի բարձրացումը առաջնային խնդիր է, որի լուծումը պահանջում է համակողմանի մոտեցում:

# ԳԼՈՒԽ III. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

## 3.1.Մանկավարժական պրակտիկայի ծրագիրը՝ որպես ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործման կարևոր գործոն

Կրթության ողջ համակարգի, մասնավորապես՝ ֆիզիկական կուլտուրայի բնագավառում կատարվող որակական բարեփոխումները նոր խնդիրներ են առաջադրում մասնագետների պատրաստության կատարելագործման ուղղությամբ: Էական փոփոխություններ կատարվեցին նաև դպրոցականների ֆիզիկական կուտուրայի կրթության ոլորտում՝ 2007-ին լույս տեսավ «Ֆիզիկական կուլտուրա առարկայի չափորոշիչ ծրագիրը» (Յու.Գ.Գրիգորյան, Հ.Ս.Մինասյան, 2007): «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ժամերի ավելացումը, ավարտական դասարաններում քննության ներդրումը, ֆիզկուլտուրա առարկայից դասագրքերի հրատարակումը (Վ.Բ.Առաքելյան, Ֆ.Գ.Ղազարյան, Յու.Գ.Գրիգորյան, Ա.Ա.Հարությունյան,2009, Գ.Կ.Ծառուկյան, Վ.Բ.Առաքելյան, Ֆ.Գ.Ղազարյան, Յու.Գ.Գրիգորյան, Ա.Ա.Հարությունյան, 2010, 2011), առողջ ապրելակերպի դասավանդումը, ֆիզկուլտուրայի ուսուցիչների համար նոր մեթոդական գրականության հրատարակումը (Հ.Ս. Մինասյան, Հ.Հ. Գաբրիելյան, 2011, 2012) նպաստեցին վերանայել մասնագետենների պատրաստության համակարգը, մասնավորապես՝ մանկավարժական պրակտիկայի գործընթացը և բովանդակությունը: Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև երեք խումբ ռեսպոդենտների կարծիքները՝ մանկավարժության ժամանակակից պահանջներին համապատասխան մշակվել է մանկավարժական պրակտիկայի նոր ծրագիր, որտեղ արտացոլվել են ֆիզիկական կուլտուրայի մասնագետների մասնագիտական կոմպետենտության ձևավորման նոր մոտեցումներ.

**Առաջին՝** համակարգվել են մասնագիտական կարողությունները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի դպրոցի եռաստիճան պահանջներին համապատասխան:

**Երկրորդ՝** լրամշակվել է մանկավարժական պրակտիկայի ծրագրի բովանդակությունը, կրթադաստիարակչական, ուսումնամեթոդական, արտադասարանական, ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական-զանգվածային աշխատանքների բաժինները:

**Երրորդ՝** մանկավարժական գործունեության ամենապատասխանատու և ամենաներգործող կողմը՝ կատարված աշխատանքի գնահատումն է, հետևաբար մշակվել և ներդրվել է գնահատման նոր համակարգ:

**Առաջին՝** մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորման համար առաջնորդվել ենք տարիքային ֆիզիոլոգիայում ու հոգեբանությունում, ընդհանուր մանկավարժությունում ընդունված դրույթներով, ինչպես նաև հանրապետության կրթության համակարգում ընդունված դպրոցների ստորաբաժանումներով՝ կրտսեր դպրոց (1-4-րդ դասարաններ), միջին դպրոց (5-9-րդ դասարաններ) և ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ) (Յու. Ա.Ամիրջանյան, Ա.Ս.Սահակյան, 2005):

**Կրտսեր դպրոցում** ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելիս ուսանողները պետք է իմանան, որ դասերի ընթացքում շեշտը դրվում է կրթական խնդիրների լուծման, հիմնական շարափոխումների ձևավորման, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի մասին գիտելիքների ձեռքբերման վրա (Ռ.Տ. Մելիքսեթյան, Ա.Ռ. Մեհրաբյան, 1993, А.П. Матвеев, 2003, Ե.Ս.Հակոբյան, Մ.Ս. Բարբարյան, 2011):

Ուսանողները պետք է հիմք ընդունեն ֆիզիկական դաստիարակության ծրագրի խնդիրների և բովանդակության յուրահատկությունը, որը բնորոշում է այդ տարիքի երեխաների ֆիզիկական կուլտուրայի դասի մեթոդիկայի առանձնահատկությունները

(Յու.Գ.Գրիգորյան, Հ.Ս.Մինասյան, 2007, Վ.Բ.Առաքելյան, Ֆ.Գ.Ղազարյան, Յու.Գ.Գրիգորյան, Հ.Ս.Մինասյան, Ա.Ա.Հարությունյան, 2008):

- Կրտսեր դպրոցական տարիքի համար դասի առաջնային խնդիրն է՝ բնական շարժողական գործողությունների կատարելագործումը (քայլք, վազք, ցատկեր, նետումներ, մագլցում):
- Մեկ դասի ընթացքում նպատակահարմար է լուծել ոչ ավելի, քան 2-3 խնդիրներ, որոնք կապված են ուսումնական նյութի յուրացման և ամրապնդման հետ:
- Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ճիշտ կեցվածքի ձևավորմանը և ներբանի մկանների ամրապնդմանը:
- Յուրաքանչյուր դասի պարտադիր անցկացվում են շարժախաղեր: Մինչև 10-ը տարեկան երեխաների մոտ խաղային նյութը պետք է զբաղեցնի դասի ընդհանուր ժամանակի մոտավորապես կեսը:
- Հիմնական շարժումների ուսուցման ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնել վարժությունների տեխնիկապես ճիշտ կատարմանը, ուսուցումը զուգակցել շարժողական ընդունակությունների մշակման հետ, ինչպես նաև ուշադրություն դարձնել արագաշարժության, ճարպկության, ճկունության, ընդհանուր դիմացկունության, հավասարակշռության, շարժումների համաչափության վրա:
- Առողջ ապրելակերպ վարելու պահանջմունքի ձևավորում, մասնավորապես՝ օրվա ռեժիմի պահպանում, առավոտյան հիգիենիկ մարմնամարզության կատարում, կոփման սկզբունքների և կանոնների կիրառում:

Կրտսեր դպրոցում իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները համակարգված ներկայացված են 7-րդ և 8-րդ աղյուսակներում:

Աղյուսակ 7

Տարրական դպրոցում իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները

| **Կազմակերպչական աշխատանքներ** | **Ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ** | **Ուսումնադաստիարակչական աշխատանքներ** |
|---|---|---|
| ***Պրակտիկանտը պետք է ծանոթանա՝***<br>• հոգեֆիզիկական առանձնահատկություններին,<br>• ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացման մեթոդիկայի առանձնահատկություններին,<br>• 2-4-րդ դասարանների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասագրքերի բովանդակությանը և դասավանդման մեթոդիկային,<br>• տնային և ինքնուրույն աշխատանքների կատարման առանձնահատկություններին,<br>• սպորտլանդիաների, սպորտային տոների նախապատրաստման և անցկացման առանձնահատկություններին,<br>• դաստիարակչական աշխատանքների պլանավորման համակարգին: | ***Ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումները պետք է նպատակաուղղված լինեն՝***<br>• մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարելավմանը,<br>• դիմադրողականության բարձրացմանը ոչ բարենպաստ պայմանների հանդեպ,<br>• ճիշտ կեցվածքի ձևավորմանը, հարթաթաթության կանխարգելմանը,<br>• ֆիզկուլտդադարի անցկացմանը,<br>• կարճատեսության կանխարգելման: | ***Ուսումնադաստիարակչական աշխատանքները պետք է ուղղված լինեն՝***<br>• երեխաների՝ դպրոցին հարմարվելուն,<br>• մարզական կողմնորոշման համար համապատասխան աշխատանքների իրականացմանը,<br>• հայեցի դաստիարակության զարգացմանը,<br>• շարժախաղերի միջոցով՝ ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացմանը,<br>• օլիմպիզմի գաղափարների կիրառմամբ երեխաների մարդասիրական դաստիարակության իրականացմանը,<br>• միջանձնային հարաբերությունների ձևավորմանը,<br>• ձևավորելու տանը և արձակուրդների ժամանակ ֆիզիկական վարժություններով ինքնուրույն զբաղվելու կարողություն,<br>• ծնողների հետ բացատրական աշխատանքին: |

Աղյուսակ 8

Կրտսեր դպրոցում կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրներն իրականացնելիս պրակտիկանտը պետք է կարողանա

| Հաղորդել | Ուսուցանել | |
|---|---|---|
| • օրվա ռեժիմի կատարման, կոփման կանոնների և անձնական հիգիենայի պահպանման կանոնները,<br>• առողջության ամրապնդման գործում, ֆիզիկական վարժությունների դերն ու նշանակությունը,<br>• ֆիզիկական վարժությունների, շարժախաղերի անվանումները և կանոնները,<br>**Տեղեկություններ՝**<br>• օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների մասին,<br>• մարմնամարզության, աթլետիկայի, դահուկային սպորտի, լողի, շախմատ մարզաձևերի և շարժախաղերի մասին: | • շարային հրամանները, շարափոխումները մեկ տողանից երկտողանի, միասյուն շարքից երկսյուն շարքի,<br>• ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ առարկաներով և առանց առարկաների,<br>• մագլցել մարզանստարանի և մարզապատի վրայով,<br>• քայլել մարզանստարանի վրայով, ոտնաթաթերի վրա, հավասարակշռության գերանի վրա (1մ բարձրության) կատարել կից քայլեր, դարձումներ, կքանիստեր,<br>• գլուխկոնձի առաջ, կանգ թիակների վրա և ընդունել «Կամուրջ» դրությունը,<br>• կախեր և հենումներ մարզապատի և մարզանստարանի վրա, ձգումներ կախ պառկած դրությունից,<br>• արագացումով վազել 30մ, հաղթահարել արգելագոտի, կրոսավազք կտրտված տեղանքում 2կմ,<br>• տեղից հեռացատկել, բարձրացատկել, ցատկել ցատկապարանով,<br>• թափավազքով հեռացատկ և բարձրացատկ,<br>• փոքր գնդակի նետում նշանակետին, | • մեծ գնդակը նետել և բռնել,<br>• Քոչարի» պարի շարժումները,<br>• ինքնուրույն կատարել առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն,<br>• ինքնուրույն կազմել և կատարել ընդհանուր զարգացնող վարժու-թյունների համալիրներ և բացատրել հաջորդականությունը,<br>• քայլել և վազել երաժշտության ռիթմին համապատասխան, կատարել կողադիր, փոփոխական, քառատրոփ քայլեր, ոստյուններ,<br>• ինքնուրույն խաղալ շարժախաղեր՝ պահպանելով կանոնները,<br>• արագ և ճիշտ կողմնորոշվել, կայացնել որոշումներ տարբեր իրավիճակներում, ցուցաբերել նախաձեռնություն, համարձակություն, փոխօգնություն, արագաշարժություն,<br>• գիտակցել և արժևորել սեփական մարմնի խնամքը, առողջությանը հետևելու և ֆիզիկական վարժություններով սիստեմատիկ զբաղվելու կարևորությունը: |

Մանկավարժական պրակտիկայի արդյունքում ուսանողը կրտսեր դպրոցում պետք է տիրապետի հետևյալ կարողություններին.

- ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման փաստաթղթերի կազմման տեխնոլոգիային,
- 1-4-րդ դասարանների ծրագրով նախատեսված տեսական և գործնական ուսումնական նյութի դասավանդմանը,
- կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակման, նրանց առաջադիմության, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության գնահատման մեթոդիկաներին,
- վարժությունների ուսուցման ընթացքում սխալների ուղղման և անվտանգության կանոնների ապահովությանը,
- ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական-զանգվածային աշխատանքների, տարբեր բնույթի և բովանդակության զրույցների, խորհրդակցությունների, խորհրդատվությունների (դպրոցականների և նրանց ծնողների, մանկավարժական կոլեկտիվի հետ) կազմակերպմանն ու անցկացմանը,

**Միջին դպրոցում** ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելիս ուսանողները պետք է իմանան, որ սովորողների մոտ տեղի են ունենում սեռական հասունացման կենսաբանական էական տեղաշարժեր, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ֆիզիկական կուլտուրայի դասերին:

Ֆիզիկական դաստիարակության մեթոդիկան հիմնվում է տարիքային զարգացման օրինաչափությունների վրա: Այդ տարիքի երեխաների անհատական տարբերությունը ուսուցիչը հաշվի է առնում ֆիզիկական կուլտուրայի դասերին և առանձնացնում է շարժումների տեմպը, չափը և շարժողական ընդունակությունների մշակումը.

- Պրակտիկանտը պետք է ապահովի ճիշտ կեցվածքի հմտության ձևավորումը և պահպանումը, մտավոր, ֆիզիկական աշխատունակության և օրգանիզմի հարմարվողականության բարձրացումը:
- Այս տարիքի երեխաների մոտ նպատակահարմար է մշակել ուժային ընդունակություններ, դիմացկունություն:
- Ուսուցման հիմնական միջոցներն են այն վարժությունները, որոնք դեռահասների մոտ ձևավորում են կյանքին անհրաժեշտ կարողություններ և հմտություններ, մշակում են շարժողական ընդունակություններ:
- Հիմնական դպրոցի ավարտական դասարաններում (8-9-րդ) սկսվում է տղաների նախազինակոչային տարիքը, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել՝ ապահովելու նրանց համապատասխան ֆիզիկական պատրաստվածությունը:
- Անհրաժեշտ է ձևավորել առողջ ապրելակերպ վարելու սովորություն, մասնավորապես՝ զերծ մնալու վնասակար սովորություններից:

Մեթոդիկայի առանձնահատկությունն այս տարիքում այն է, որ նոր նյութը ուսուցանվում է դասի հիմնական մասի սկզբում, քանի որ, ըստ ծրագրի բովանդակության՝ այն ավելի բարդ է, քան կրտսեր դպրոցում:

Միջին դպրոցում իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները համակարգված ներկայացված են 9-րդ և 10-րդ աղյուսակներում:

Աղյուսակ 9

Միջին դպրոցում իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները

| Կազմակերպչական աշխատանքներ | Ֆիզկուլտուրային-առողջարարականմիջոցառումներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքներ |
|---|---|---|
| *Պրակտիկանտը պետք է ծանոթանա՝*<br>• հոգեֆիզիկական առանձնահատկություններին՝ հաշվի առնելով սեռական հասունացման շրջանը,<br>• տղաների և աղջիկների ֆիզիկական դաստիարակության մոտեցման յուրահատկություններին,<br>• ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացման մեթոդիկայի առանձնահատկություններին,<br>• 5-9-րդ դասարանների աշակերտների դաստիարակչական աշխատանքներին,<br>• արտադասարանական աշխատանքների կազմակերպմանն ու անցկացմանը,<br>• տնային և ինքնուրույն աշխատանքների կատարմանը,<br>• մրցումների, սպորտլանդիաների, մարզական տոների նախապատրաստմանն ու անցկացմանը: | *Ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումները պետք է նպատակաուղղված լինեն՝*<br>• մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարելավմանը,<br>• դիմադրողականության բարձրացմանը ոչ բարենպաստ պայմանների հանդեպ,<br>• ճիշտ կեցվածքի հմտության ձևավորմանը, հարթաթաթության կանխարգելմանը,<br>• կարճատեսության կանխարգելմանը,<br>• նախապարապմունքային մարմնամարզության անցկացմանը,<br>• ֆիզկուլտդադարների անցկացմանը,<br>• կոփման սկզբունքների և կանոնների կիրառմանը,<br>• շարժողական ընդունակությունների (ուժի, արագաշարժության, ճարպկության, ճկունության, դիմացկունության, կոորդինացիայի և այլն) մշակմանը: | *Ուսումնադաստիարակչական աշխատանքները պետք է ուղղված լինեն՝*<br>• սեփական առողջությանը հետևելու կարևորության գիտակցման ձևավորմանը,<br>• սեռական դաստիարակությանը,<br>• միջանձնային հարաբերությունների ձևավորմանը,<br>• հայեցի դաստիարակության զարգացմանը,<br>• ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացմանը,<br>• երեխաների մարդասիրական դաստիարակության իրականացմանը՝ օլիմպիզմի գաղափարների կիրառմամբ,<br>• ձևավորել կարողություն տանը և արձակուրդների ժամանակ՝ ինքնուրույն զբաղվելու ֆիզիկական վարժություններով,<br>• նախապատրաստելու «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի քննությանը,<br>• մարզական կողմնորոշման համար համապատասխան աշխատանքների իրականացմանը,<br>• ծնողների հետ բացատրական աշխատանքին: |

Աղյուսակ 10

Միջին դպրոցում կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրներն իրականացնելիս

պրակտիկանտը պետք է կարողանա

| Հաղորդել | Ուսուցանել | |
|---|---|---|
| • գիտելիքներ ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու անհրաժեշտության մասին՝ առողջության պահպանման և անձի ներդաշնակ զարգացման համար,<br>• ֆիզիկական կուլտուրայի և առանձին մարզաձևերի, ինքնահսկողության, պարապմունքների ժամանակ անվտանգության կանոնները,<br>• տեղեկություններ վնասակար սովորությունների կործանարար ազդեցության մասին,<br>• գիտելիքներառողջ | • շարային հրամաններ, շարափոխում միասյուն շարքից քառասյուն շարքի, դարձումներ զույգերով, եռյակներով (ընթացքից),<br>• ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ, տղաները՝ կցագնդերով, լցրած գնդակներով, աղջիկներն օղերով, գուրզերով,<br>• կախեր և հենումներ.<br>• տղաներին՝ պտտաձողի վրա վերելք ուժով, կախ ծալված, կախ արտակորված, կախ դրությունից ձգումներ, զուգափայտի վրա ձեռքերի հենումից վերելք՝ առաջ և հետ թափին, հենում դրությունից ձեռքերի ծալում և ուղղում, հենում անկյունով, ոտքերը զատած՝ նստած դրությունից կանգ ուսերին,<br>• աղջիկներին՝ մեկ ոտքի թափով և մյուսի հրումով վերելք՝ շրջվելով ընդունելով հենում ցածր ձողին դրությունը, | • բասկետբոլիստի կեցվածքով տեղաշարժվել, գնդակը փոխանցել և ընդունել, վարել աջ և ձախ ձեռքով՝ ուղղության և արագության փոփոխումով, նետել օղակի միջից տեղից և շարժման ընթացքում, կատարել տուգանային նետում, գնդակի դուրսհանում և խլում, խաղալ բասկետբոլ՝ կանոնները պահպանելով,<br>• վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժվել, երկու ձեռքով կատարել գնդակով փոխանցումներ երկու ձեռքով տեղում և շարժման մեջ, ցանցի վրայով, կատարել ցածից և վերին ուղիղ սկզբնահարված, ուղիղ հարձակողական հարված, շրջափակումով ընդունել սկզբնահարվածը, խաղալ վոլեյբոլ՝ կանոնների պահպանումով,<br>• հանդբոլի գնդակի վարում, փոխանցում, նետում դարպասին՝ ներքևից շարժման մեջ, կանգառով, ցատկով, գնդակը որսալ և շրջափակել, տուգանային նետում, խաղալ հանդբոլ՝ մրցման կանոնների պահպանումով,<br>• ֆուտբոլիստի կեցվածքով տեղաշարժվել, գնդակը |

| | | |
|---|---|---|
| ապրելակերպի մասին,<br>• տեղեկություններ օլիմպիական խաղերի նշանակության և «Արդարացի խաղի» մասին,<br>• տեղեկություններ մարզախաղերի, տարբեր մարզաձևերի և դրանց կանոնների մասին: | • հենացատկեր.<br>• տղաներին՝ այծի վրայով «Ոտքերը կծկած» եղանակով (100-110սմ բարձրություն), նժույգի վրայով «Ոտքերը զատած» եղանակով (110-120սմ բարձրություն),<br>• աղջիկներին՝ ցատկ այծի վրայով «Ոտքերը զատած» եղանակով՝ 100սմ բարձրության,<br>• տղաներին՝ կատարելու գլուխկոնծի առաջ, երկարությամբ, կանգ գլխի վրա, կանգ ձեռքերի վրա մրցակցի օգնությամբ,<br>• աղջիկներին՝ գլուխկոնծի հետ՝ ընդունելով կիսալարան դրությունը,<br>• ազգային «Քոչարի» և «Շալախո» պարի շարժումները,<br>• պարանամագլցել ձեռքերի և ոտքերի օգնությամբ (տղաներին՝ 3 մ, աղջիկներին՝ 2,5 մ բարձրություն),<br>• վազել արագացումով 40մ, հավասարաչափ դանդաղ վազել 6 րոպե,<br>• թափավազքով հեռացատկել, բարձրացատկել,<br>• փոքր գնդակի նետում նշանակետին և հեռավորության, | վարել, կասեցնել ոտնաթաթով, կրծքով, խլել մրցակցից, հարվածել անշարժ և գլորվող գնդակին ոտնաթաթի ներսի և ոտնաթմբի միջին մասով, խաղալ ֆուտբոլ մրցման կանոնների պահպանումով:<br>• տարբեր իրավիճակներում կողմնորոշվել, որոշումներ կայացնել, համագործակցել,<br>• ինքնուրույն որոշել իր ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մակարդակը,<br>• ինքնուրույն կազմել և կատարել վարժությունների համալիրներ,<br>• մարզախաղերի ժամանակ ցուցաբերել տեխնիկական և տակտիկական գործողությունների կատարում,<br>• մարզախաղերի ժամանակ ցուցաբերել նախաձեռնություն, կազմակերպվածություն, ինքնատիրապետում, հանդուրժողակա-նություն,<br>• հարգել ընկերոջը, օգնության հասնելու պատրաստակամություն, դժվարությունները հաղթահարելու համար ցուցաբերել կամք և հայրենասիրություն,<br>• ցուցաբերել բարություն, փոխգգնություն, ընկերասիրություն: |

Մանկավարժական պրակտիկայի արդյունքում ուսանողը միջին դպրոցում պետք է տիրապետի հետևյալ կարողություններին.

- 5-9-րդ դասարանների ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման փաստաթղթերի կազմման տեխնոլոգիային, ինչպես նաև՝ ծրագրով նախատեսված տեսական և գործնական ուսումնական նյութի դասավանդման մեթոդիկային,
- դպրոցաանների շարժողական ընդունակությունների մշակմանը,
- վարժությունների ուսուցման ընթացքում սխալների ուղղմանը, անվտանգության կանոնների և ապահովմանը,
- ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական-զանգվածային աշխա-տանքների կազմակերպմանն ու անցկացմանը,
- սեկցիոն պարապմունքների, տարբեր բնույթի և բովանդակության զրույցների, խորհրդակցությունների (դպրոցականների և նրանց ծնողների, մանկավարժական կոլեկտիվի հետ) կազմակերպմանն ու անցկացմանը,
- դպրոցականների առաջադիմությանը, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության գնահատմանը:

**Ավագ դպրոցում** ուսանող-պրակտիկանտներն ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնում են՝ հաշվի առնելով պատանիների ու աղջիկների անատոմիական, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները՝ ուսուցումը կազմակերպելու, միջոցների և մեթոդների ընտրության, շարժողական գործողութիւններն ու ընդունակությունները ուսուցանելու և մշակելու ֆիզիկական բեռնվածությունը չափավորելու տարբերակված մոտեցումներ:

Ուսանողները պետք է իմանան, որ ավագ դպրոցում ֆիզիկական դաստիարակության աշխատանքներն ուղղված են՝

- Օժանդակել դպրոցականներին՝ նախապատրաստվելու կյանքին՝ ուսումնական, աշխատանքային գործունեության, տղաներին՝ բանակի ծառայության, աղջիկներին՝ մայրության:

- Ելնելով նպատակային ուղղվածությունից՝ ապահովել անհրաժեշտ շարժողական և կիրառական պատրաստություն:
- Ապահովել դպրոցականների ընդհանուր ֆիզկուլտուրային կրթությունը:
- Ձևավորել առողջ ապրելակերպ վարելու կուլտուրա, մասնավորապես՝ վնասակար սովորությունների բացակայության վերաբերյալ կայուն դիրքորոշում:

Ավագ դպրոցում իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները համակարգված ներկայացված են 11-րդ և 12-րդ աղյուսակներում:

Ավագ դպրոցում իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները

| **Կազմակերպչական աշխատանքներ** | **Ֆիզկուլտուրային-առողջարարականմիջոցառումներ** | **Ուսումնադաստիարակչական աշխատանքներ** |
|---|---|---|
| ***Պրակտիկանտը պետք է ծանոթանա՝***<br>• պատանիների և աղջիկների հոգեֆիզիկական առանձնահատկու-թյուններին,<br>• ավագ դպրոցի ֆիզիկական կուլտուրայի դասերի անցկացման մեթոդիկայի յուրահատկություններին,<br>• տղաների և աղջիկների ֆիզիկական դաստիարակության մոտեցման յուրահատկություններին,<br>• արտադասարանական աշխատանքների կազմակերպմանն ու անցկացմանը,<br>• տնային և ինքնուրույն աշխատանքների առանձնահատկություններին,<br>• մրցումների, սպորտլանդիաների, մարզական տոների նախա-պատրաստման և անցկացման առանձնահատկություններին: | ***Ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումները պետք է նպատակաուղղված լինեն՝***<br>• բարձր ֆիզիկական աշխատունակության պահպանմանը, աճող բեռնվածությունների հանդեպ հարմարողականության բարձրացմանը,<br>• «Առողջ ողնաշարի» ձևավորմանը և պահպանմանը,<br>• կարճատեսության կանխարգելմանը,<br>• օրվա ռեժիմի պահպանմանը,<br>• կոփման սկզբունքների և կանոնների կիրառմանը,<br>• նախապարապմունքային մարմնամարզության, ֆիզկուլտ դադարների անցկացմանը,<br>• շարժողական ընդունակությունների (ուժի, արագաշարժության, ճարպկության, ճկունության, ընդհանուր դիմացկունության, կոորդինացիայի և այլն) մշակմանը: | ***Ուսումնադաստիարակչական աշխատանքները պետք է ուղղված լինեն՝***<br>• առողջությունը պահպանելու կայուն սովորության ձևավորմանը՝ զերծ մնալով վնասակար սովորություններից,<br>• ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը,<br>• մարդասիրական դաստիարակության իրականացում օլիմպիզմի գաղափարների կիրառմամբ,<br>• ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացմանը,<br>• դժվար դաստիարակվող երեխաների հետ աշխատանքների իրականացման առանձնահատկություններին,<br>• ձևավորել կարողություն՝ ինքնուրույն զբաղվելու ֆիզիկական վարժություններով տանը և արձակուրդների ժամանակ,<br>• նախապատրաստել ֆիզկուլտուրա առարկայի ավարտական քննությանը,<br>• ծնողների հետ աշխատանքային ձևերի առանձնահատկություններին: |

Աղյուսակ 12

Ավագ դպրոցում կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրներն իրականացնելիս

պրակտիկանտը պետք է կարողանա

| **Հաղորդել** | **Ուսուցանել** | |
|---|---|---|
| • Գիտելիքներ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի, անձի համակողմանի զարգացման վերաբերյալ, աշխատանքային գործունեության, պատանիների զինվորական ծառայության նախապատրաստման գործի մասին,<br>• ֆիզիկական վարժությունների ինքնուրույն կատարման ժամանակ ինքնավերահսկողության և անվտանգության կանոնները,<br>• տեղեկություններ մարզումների բեռնվածության, գերհոգնածության և կանխարգելման միջոցների վերաբերյալ,<br>• տեղեկություններ օլիմպիական | • շարային հրամաններ, շարափոխում մեկ շարքից երկու, երեք և ութ շարքի, ընթացքում՝ դարձումներ, կատարել շարափոխում միասյուն շարքից երկսյուն, քառասյուն շարքի,<br>• ընդհանուր զարգացնող 10-12 վարժություններից կազմել համալիրներ,<br>• պատանիներին՝ կատարել գլուխկոնձի երկարությամբ, հետ և կանգ ձեռքերի վրա, ուժային վարժություններ կցա•նդերով, էսպանդերներով, պտտաձողից կախ դիրքում ծալվելով թափահարում, կախից վերելք շրջահենումով, դանդաղ վարցատկ, պտտաձողից կախ դրությունից ձգումներ, հենացատկել երկարությամբ տեղադրված 120սմ բարձրության նժույգի վրայով, պարանամագլցել ոտքերի օգնությամբ, կատարել վարժություններ մարզասարքերի վրա,<br>• աղջիկներին՝ կատարել ընդհանուր զարգացնող վարժություններ, վարժություններ օղակով, ժապավենով, ցատկապարանով, ռիթմիկ մարմնամարզության համալիրներ, ճկունության մշակման վարժություններ, | • վոլեյբոլի գնդակի փոխանցումներ վերևից, ընդունում և փոխանցում ներքևից երկու ձեռքով, գնդակը ընդունել սկզբնահարվածից և փոխանցել 3-րդ գոտի, ընդունել հարձակողական հարվածից հետո և փոխանցել ցատկով, կատարել հարձակողական հարված 2-րդ և 3-րդ գոտիներից, անհատական և խմբակային շրջափակում, երկկողմանի խաղ կանոններով,<br>• հանդբոլի գնդակը փոխանցել և ընդունել եռյակներով, «Խաչաձև» և «Ութնյակով» շարժվել, նետել դարպասին տարբեր և հենված դրություններից, կատարել խաբուսիկ շարժումներ, անհատական և թիմային գործողություններ, դիրքային հարձակում, սահմանային պաշտպանություն երկկողմանի խաղ կանոններով,<br>• հարվածել ֆուտբոլի թռչող գնդակին ցատկով և թափավազքով, ոտնաթմբի միջին մասով և գլխով, կասեցնել ոտնաթաթով և կրծքով, կատարել խաբուսիկ շարժումներ, երկկողմանի խաղ կանոններով:<br>• տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնել, հաղորդակցվել, համագործակցել, ցուցաբերել |

| | | |
|---|---|---|
| շարժման գաղափարախոսության համամարդկային արժեքների, «Արդարացի խաղի», օլիմպիական խաղերին հայ մարզիկների մասնակցության մասին,<br>• գիտելիքներ առողջ ապրելակերպ վարելու վերաբերյալ,<br>• տեղեկություններ մարզախաղերի կանոնների, անհատական և խմբակային տակտիկական գործողությունների մասին: | գլուխկոնծի առաջ, հետ և «Կամուրջ» վարժությունը, պառկած դիրքից կանգ թիակների վրա, վարժություններ մարզասարքերի վրա,<br>• ցածր մեկնարկից վազել 60մ, հավասարաչափ տեմպով վազել 6 րոպե, ճիշտ փոխանցել փոխանցավազքի փայտիկը, վազել 400մ՝ աղջիկներ, 800մ՝ տղաներ,<br>• հեռացատկել «Ոտքերը կծկած» և բարձրացատկել «Քայլանցում» եղանակներով,<br>• բասկետբոլի գնդակը վարել փոփոխական արագացումներով, փոխանցել և ընդունել խաղընկերոջ ակտիվ դիմադրությամբ, նետել մեկ ձեռքով ուսի վրայից, կենտրոնից, աջ և ձախ կողմերից, կատարել տուգանային նետում, վահանից հետ թռչող գնդակի ընդունում, նետումներ տարբեր հեռավորությունից, անհատական և խմբակային տակտիկական գործողություններ, երկկողմանի խաղ կանոններով, | արագ կողմնորոշվածություն, նպատակասլացություն, փոխօգնություն, ինքնավստահություն, ինքնատիրապետում, հարգանք խաղընկերոջ և ուրիշների նկատմամբ,<br>• ինքնուրույն կազմել և կատարել ռիթմիկ մարմնամարզական, ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ, վարժություններ մարզասարքերի վրա՝ շարժողական ընդունակությունների մշակման ուղղվածությամբ,<br>• խաղերի ժամանակ դրսևորել տեխնիկական և տակտիկական գործողությունների ստեղծագործական մոտեցում,<br>• ցուցաբերել պատրաստակամություն, պատասխանատվություն, ազնվություն, բարություն, հայրենասիրություն, մարդասիրական վարքագծի դրսևորում,<br>• վերլուծել իր ֆիզիկական պատրաստվածության վիճակը, ունենալ ինքնահսկման և ինքնագնահատման հմտություններ: |

Մանկավարժական պրակտիկայի արդյունքում ուսանողը պետք է տիրապետի հետևյալ կարողություններին.

- ավագ դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման փաստաթղթերի կազմման տեխնոլոգիային, ինչպես նաև՝ ծրագրով նախատեսված տեսական և գործնական ուսումնական նյութի դասավանդման մեթոդիկային,
- ավագ դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակմանը, առաջադիմությանը, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության գնահատմանը,
- վարժությունների ուսուցման ընթացքում սխալների ուղղման և անվտանգության կանոնների ապահովմանը,
- ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական-զանգվածային աշխատանքների կազմակերպմանն ու անցկացմանը,
- սեկցիոն պարապմունքների, տարբեր բնույթի և բովանդակության զրույցների, խորհրդակցությունների, խորհրդատվությունների (ավագ դպրոցականների և իրենց ծնողների, մանկավարժական կոլեկտիվի հետ), կազմակերպմանն ու անցկացմանը,

**Երկրորդ՝ ծրագրի բովանդակության լրամշակում.**

Ժամանակակից մանկավարժության և ֆիզիկական դաստիարակության տեսությունում ընդունված նորարարական մոտեցումները ներառված են ծրագրում, մասնավորապես՝ ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների, տեսական և մարզական դասերի իրականացումը: Այն առաջադրում է համապատասխան ձևով լրամշակել բովանդակությունը՝ ըստ մանկավարժական պրակտիկայի անցկացման յուրահատկությունների:

Մանկավարժական պրակտիկան կրում է կրթադաստիարակչական արտահայտված բնույթ: Հետևաբար, ուսանողները մանկավարժական պրակտիկայի ընթացքում պետք է կարողանան արդյունավետ իրականացնել կատարվող կազմակերպչական, ուսումնամեթոդական, դաստիարակչական, արտադասարա-

նական, ֆիզկուլտուրային-առողջարարական և գիտահետազոտական աշխատանք-ները: Ստորև ներկայացված է ծրագրի համառոտ բովանդակությունը, որտեղ արտացոլվում է աշխատանքի բոլոր ձևերը (աղյուսակ 13):

Ծրագրի բոլոր բաժինների իրականացումը մանկավարժական պրակտիկայի ընթացքում նպաստում է ուսանողների մոտ ձևավորել հիմնական մանկավարժական կարողություններ և հմտություններ՝ ինքնուրույն անցկացնել ֆիզիկական կուլտուրայի դասերը, վերլուծել ուսումնական դասերը, կազմել ուսումնամեթոդական փաստաթղթեր, անցկացնել տարբեր բնույթի դաստիարակչական աշխատանքներ, կազմակերպել մարզական-զանգվածային և ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ և այլն:

Ծրագրի մշակման ընթացքում գրական աղբյուրների վերլուծության հիման վրա դուրս են բերվել և համակարգվել «Ֆիզիկական կուլտուրայի» ուսուցչի մասնագիտական հիմնական կարողությունները: Ըստ կատարված աշխատանքի բնույթի (տրամագիր 6)՝ դրանք համակարգված են չորս բաժիններում՝ ուսումնամեթոդական, ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական-զանգվածային և դաստիարակչական:

Աղյուսակ 13

Մանկավարժական պրակտիկայի ծրագրի բովանդակությունը

| | **ԲԱԺԻՆՆԵՐ ԵՎ ԹԵՄԱՆԵՐ** |
|---|---|
| **I.** | **Կազմակերպչական աշխատանքներ** |
| | Մասնակցություն մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին |
| | Ծանոթանալ պրակտիկայի բաժնի, գործնական ամբիոնների և գրադարանի կողմից պատրաստված պրակտիկայի անկյան բովանդակության հետ |
| | Մանրամասն ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի ծրագիրը, փաստաթղթերը և պրակտիկանտի տետրը |
| | Մասնակցել պրակտիկային վերաբերող բոլոր միջոցառումներին |
| | Աշխատանք դպրոցի տնօրենի և մանկավարժական կոլեկտիվի հետ |
| | Աշխատանք ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ |

| | |
|---|---|
| | Աշխատանք ամրացված դասարանի դասղեկի հետ |
| | Աշխատանք դպրոցի բուժաշխատողի հետ |
| II. | **Ուսումնամեթոդական աշխատանքներ** |
| | Փաստաթղթերի կազմում |
| | Դասերի դիտում և անցկացում |
| | Դասի մանկավարժական վերլուծություն |
| | Արտադասարանական պարապմունքների կազմակերպում և անցկացում |
| | Մարզական-զանգվածային (սպորտլանդիաներ, մրցումներ և այլ տոնակատարություններ) աշխատանքների կազմակերպում և անցկացում |
| | Ֆիզկուլտուրային- առողջարարական միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ |
| | • նախապարապմունքային մարմնամարզության անցկացում (ամրացված դասարանում) |
| | • ֆիզկուլտրոպեի անցկացում |
| | • շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ երկարացված դասամիջոցներին |
| | • ամենօրյա ֆիզկուլտուրային պարապմունքներ երկարօրյա խմբերում |
| | • ամենամսյա առողջության և սպորտի օրեր |
| | Տեսական դասերի անցկացում |
| | Մարզական  դասերի անցկացում՝ սեկցիոն պարապմունքների ձևով |
| | Առողջական խնդիրներ ունեցող երեխաների պարապմունքներին ծանոթացում և դիտում, աշակերտների բժշկական զննման քարտի ուսումնասիրում |
| | Ինքնուրույն պարապմունքների անցկացման մեթոդիկայի ուսուցում |
| | Դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության և ֆիզիկական զարգացման որոշում և գնահատում |
| | Ուսուցիչ-պրակտիկանտի նախապատրաստվելը դասին |
| III. | **Դաստիարակչական աշխատանքներ** |
| | Կազմել աշակերտների հոգեբանական բնութագրերը |
| | Ուսումնասիրել ամրացված դասարանի դաստիարակչական աշխատանքները |
| | Բաց դասերի անցկացում (տեսական և գործնական, առողջ ապրելակերպի հետ կապված) |
| | Համաշխարհային առողջության օրվան նվիրված միջոցառման նախա-պատրաստում և տոնում (ապրիլի 7-ին) |
| | Տուրիստական արշավների կազմակերպում և անցկացում |
| | Քարոզչական աշխատանքների կազմակերպում և անցկացում |
| IV | **Գիտահետազոտական աշխատանքներ** |
| V. | **Հաշվետվության կազմում** |




Տրամագիր 6.Մասնագիտական կարողությունների համակարգումը ըստ կատարված աշխատանքի բնույթի

Ծրագրի բաժինների փուլ առ փուլ իրականացման վերջնարդյունքում ձևավորվում են ուսանողների մասնագիտական կարողությունները, որոնց մեխանիզմը ներկայացված է ֆիզիկական կուլտուրայի դասի անցկացման օրինակով՝ 7-րդ տրամագրում:




Տրամագիր 7.Մասնագիտական կարողությունների ձևավորման մեխանիզմը (ֆիզիկական կուլտուրայի դասի անցկացման օրինակով)

Ընդ որում՝ անհրաժեշտ է նշել, որ մասնագիտական կարողությունների ձևավորման այս մեխանիզմը գործում է վերը նշված բոլոր կարողությունների ձևավորման գործընթացում:

**Երրորդ՝** մանկավարժական պրակտիկայի առաջադիմությունն ապահովող գնահատման համակարգ.

Մանկավարժական գործունեության ամենապատասխանատու և ամենաներգործող կողմը՝ կատարված աշխատանքի գնահատումն է: Մանկավարժության տեսության մեջ ներկայումս փորձեր է կատարվում ժամանակակից պահանջներին համապատասխան ավելի օբյեկտիվացնել գնահատման համակարգը:

Գնահատման համակարգը կազմելիս հիմք է ընդունվել մանկավարժական բուհերի կոնսորցիումի կողմից 2009-ին մշակված դրույթները: Այն տեղայնացվել է՝ ելնելով Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և անցկացման առանձնահատկություններից: Բոլոնյան համակարգի համաձայն՝ այսօր ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների ուսումնական գործունեությունը գնահատվում է 100 միավոր կրեդիտավարկանիշային բազմագործունեության համակարգով (հավելված 7):

Մեր խնդիրն է եղել առանձնացնել ծրագրի բաժինների պահանջներին համապատասխան յուրաքանչյուր առաջադրանքի բաղադրիչները, որոնք հիմք են հանդիսանում՝ գնահատելու ուսանողների բազմաբնույթ գործունեությունը (հավելված 8): Գնահատման համակարգը մշակելիս առաջնորդվել ենք բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունված վերը նշված կարգով, որտեղ 10-ը միավոր տրվել է ուսանողների հաճախմանը, 50 միավոր՝ գիտելիքներին (ուսումնամեթոդական աշխատանքներ), 15 միավոր՝ ակտիվությանը (դաստիարակչական և կազմակերպչական աշխատանքներ), 25 միավոր՝ ինքնուրույն բաժնին (արտադասարանական և ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ): Այսպիսով՝ մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների հիմնական գործունեությանը տրվեց 90 միավոր (աղյուսակ 14):

Աղյուսակ 14

Ծրագրի բաժինները և գնահատման միավորները

| **ԳԻՏԵԼԻՔՆԵՐ (ուսումնամեթոդական աշխատանքներ)** | **50 միավոր** | |
|---|---|---|
| | **Քանակը** | **Միավորը** |
| Ժամացանց, տարեկան պլան-գրաֆիկ | 2/2 | 2 |
| Թեմատիկ պլան | 2 | 4 |
| Գործնական և տեսական դասի կոնսպեկտներ | 12 | 12 |
| Գործնական և տեսական դասերի անցկացում | 12 | 24 |
| Դասի մանկավարժական վերլուծություն և բեռնվածության որոշում | 1 | 4 |
| Ինքնուրույն պարապմունքների անցկացման մեթոդիկայի ուսուցում | 1 | 1 |
| Դպրոցականների ֆիզիկական պատրաստության և ֆիզիկական զարգացման որոշում և գնահատում | 1 | 2 |
| Հանրակրթական առարկաների դասալսում | 4 | 1 |
| **ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ (դաստիարակչական և կազմակերպչական աշխատանքներ )** | **15 միավոր** | |
| **Դաստիարակչական աշխատանքներ** | **13 միավոր** | |
| | **Քանակը** | **Միավորը** |
| Տուրիստական արշավների կազմակերպում և անցկացում | 1 | 4 |
| Քարոզչական աշխատանքների իրականացում | ընթացքում | 4 |
| Աշակերտների հոգեբանական բնութագիր | 1 | 2 |
| Օրագրի վարում և հաշվետվության կազմում | 40 -1 | 2 |
| Մասնակցություն ծնողական ժողովներին | 1-2 | 1 |
| **Կազմակերպչական աշխատանքներ** | **2 միավոր** | |
| Մասնակցություն մանկավարժական պրակտիկայի ներգրավիչ և ամփոփիչ կոնֆերանսներին | + | + |
| Ծանոթանալ պրակտիկայի բաժնի, գործնական ամբիոնների և գրադարանի կողմից պատրաստված պրակտիկայի անկյան բովանդակությանը | + | + |
| Մանրամասն ուսումնասիրել մանկավարժական պրակտիկայի ծրագիրը, մանկավարժական պրակտիկայի ժամանակ պահանջվող բոլոր փաստաթղթերը և պրակտիկանտի տետրը | + | + |
| Մասնակցել պրակտիկային վերաբերող բոլոր միջոցառումներին | + | + |

Աղյուսակ 14-ի շարունակություն

| | | |
|---|---|---|
| Աշխատանք դպրոցի տնօրենի և մանկավարժական կոլեկտիվի հետ | + | + |
| Աշխատանք դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի (ների) հետ | + | + |
| Աշխատանք կցված դասարանի դասղեկի հետ | + | + |
| Աշխատանք դպրոցի բուժաշխատողի հետ | + | + |
| **ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ (արտադասարանական միջոցառումներ)** | **25 միավոր** | |
| | **Քանակը** | **Միավորը** |
| Սեկցիոն պարապմունքների կազմակերպում (կոնսպեկտ) | 1 | 2 |
| Սեկցիոն պարապմունքների անցկացում | 1 | 3 |
| Մարզական դասերի կազմակերպում (կոնսպեկտ) | 1 | 2 |
| Մարզական դասերի անցկացում | 1 | 3 |
| Մրցումների կազմակերպում և անցկացում (տարբեր մարզաձևերից) | 1 | 4 |
| Սպորտլանդիաների կազմակերպում և անցկացում | 1 | 4 |
| **Ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպում և անցկացում** | **13** | **7** |
| Ֆիզկուլտդադար | 4 | 1 |
| Նախապարապմունքային մարմնամարզություն | 4 | 1 |
| Շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ մեծ դասամիջոցներին | 4 | 1 |
| Ցերեկույթների, վիկտորինաների, սպորտի օրեր | 1 | 4 |

Հիմք ընդունելով փորձագիտական գնահատման արդյունքները յուրաքանչուր աշխատանքի համար՝ ըստ աշխատանքի բարդության ուսանողները ստանում են սահմանված միավորներ: Քանի որ պահանջվող աշխատանքները բազմաբնույթ են և բազմաքանակ, հետևաբար միավորային չափը փոքր է յուրաքանչյուր առաջադրվող աշխատանքի համար: Դրա հետ մեկտեղ աշխատանքի գնահատման համար առանձնացվել են այն կարևոր բաղադրիչները, որոնք կիստակեցնեն կատարված աշխատանքի գնահատումը: Ուստի, գնահատման համակարգը կիրառելի և մատչելի դարձնելու նպատակով առաջնորդվել ենք հանրակրթական դպրոցում ընդունված գնահատման 10-ը բալային համակարգով (Հ.Ս. Մինասյան, Հ.Հ. Գաբրիելյան, 2012): Մշակված տեխնոլոգիան հնարավորություն տվեց հեշտությամբ բալը վերածել միավորի (աղյուսակ15):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասի կոնսպեկտի գնահատման տեխնոլոգիան: Աղյուսակից տեսանելի է, որ կոնսպեկտի գնահատման համար այն բաժանել ենք բաղադրիչների իր ենթակետերով, յուրաքանչյուր բաղադրիչ գնահատվել է ըստ կատարված աշխատանքի որակի:

Կատարված աշխատանքի հանրագումարային գնահատականն արտահայտվում է միջին թվաբանական բալով, որն էլ վերածվում է համապատասխան միավորի:

Աղյուսակ 15

Գործնական դասի կոնսպեկտի գնահատման տեխնոլոգիայի օրինակ

| **Բովանդակություն** | **0-3 Անբա-վարար** | **4-6 Բավա-րար** | **7-8 Լավ** | **9-10 Գերա-զանց** | **Ընդհանուր բալ 10** | **Միա-վորը 1** |
|---|---|---|---|---|---|---|
| 1. դասի առջև դրված խնդիրները և դրանց կապը նախորդ դասի խնդիրների հետ | | | 7 | | 7 | |
| 2. կրթական, դաստիարակչա-կան և առողջարարական խնդիրների ապահովում | | 6 | | | 6 | |
| 3. ներգրավիչ մաս<br>• տևողություն, | | 5 | | | (5+7+6+5+7+6) : 6 = 6 | |
| • բովանդակության համապատասխանումը հիմնական խնդիրներին, | | | 7 | | | |
| • մասնակի խնդիրների պլանավորում (շարային վարժությունների ուսուցում, կեցվածքի ձևավորում), | | 6 | | | | |
| • համապատասխան մեթոդ-ների կիրառում, | | 5 | | | | |
| • բեռնվածության չափավո-րում, | | | 7 | | | |
| • տերմինների ճիշտ գրառում | | 6 | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. հիմնական մաս<br>• տևողություն, | | | 7 | | (7+4+5+5+6+4) :6 = 5,1 | |
| • վարժությունների ուսուցումը ընթացքում՝ մոտեցնող և նախապատրաստական վարժությունների ընտրություն, նրանց հաջորդականությունը, | | 4 | | | | |
| • համապատասխան մեթոդների կիրառում, | | 5 | | | | |
| • բեռնվածության չափավորում | | 5 | | | | |
| • շարժողական ընդունակու-թյունների մշակումը (նրանց տեղը դասի ժամանակ) | | 6 | | | | |
| • մեթոդական և կազմակերպ-չական ցուցումներ | | 4 | | | | |
| 5.եզրափակիչ մաս | | | 7 | | (7+7+6): 3= 6,6 | |
| • բովանդակություն | | | 7 | | | |
| • տնային առաջադրանքների պլանավորում: | | 6 | | | | |
| **Ընդհանուր գնահատական (բալ և միավոր)** | | | | | (7+6+6+5,1+6, 6) : 5= 6,1<br>**6,1 X 0,1= 0,6** | **0,6** |

1 միավորը = 10-ը բալի ((1 բալը = 0,1 միավոր (1: 10= 0,1))

Նման մոտեցումը հնարավորություն է տալիս առանձնացնել կատարվող աշխատանքների առանձին բաղադրիչների գնահատականները, բացահայտել պրակտիկանտների գիտելիքների, կարողությունների թերի կողմերը, նաև անհատականացնել ուսանողի հետ աշխատանքը, ժամանակին մեթոդական օգնություն ցուցաբերել թերի կողմերը շտկելու համար: Ուսանողի համար անմիջապես տեսանելի և թափանցիկ է դառնում թե իր կողմից կատարված աշխատանքն ինչպես է գնահատվել, բացահայտել նրա թույլ և ուժեղ (լավ) կողմերը, ինչպես նաև ինքնագնահատելու և ինքնահսկելու սեփական գիտելիքներն ու կարողությունները:

Նման գնահատման սկզբունքի կիրառումը ֆիզիկական կուլտուրայի դասին ունի հետևյալ պատկերը՝ ըստ 16-րդ աղյուսակի:

Այսպիսով՝ մանկավարժական պրակտիկայի ընթացքում նախատեսված ֆիզիկական կուլտուրայի դասի 12 կոնսպեկտի կազմումը և նման գնահատման տեխնոլոգիայի կիրառումը մեծ հնարավորություն է տալիս մեթոդիստին՝ տեսնելու իր խմբում ընդգրկված յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքի և առաջադիմության շարժընթացը: Հետևաբար, գնահատման նման համակարգը նպատակաուղղված է՝ ապահովելու մանկավարժական պրակտիկայի գործունեության արդյունավետությունը, բարձրացնելու նրա որակը: Արդյունքում ուսանողները հնարավորություն են ունենում տեսնելու իրենց կարողությունների ձևավորման շարժընթացը:

Աղյուսակ 16

Գործնական դասի անցկացման գնահատման տեխնոլոգիայի օրինակ

<table>
<tr><th>Բովանդակություն</th><th>0-3<br>Անբա-<br>վարար</th><th>4-6<br>Բավա-<br>րար</th><th>7-8<br>Լավ</th><th>9-10<br>Գերա-<br>զանց</th><th>Ընդհանուր<br>բալը<br>10</th><th>Միավո-<br>րը<br>2</th></tr>
<tr><td>1.դասի կազմակերպում,<br>• ժամանակին սկսել դասը,</td><td></td><td></td><td></td><td>9</td><td rowspan="5">(9+9+9+9 +7) : 5 = 8,6</td><td rowspan="8"></td></tr>
<tr><td>• ուսուցչի ճիշտ տեղի ընտրությունը դահլիճում</td><td></td><td></td><td></td><td>9</td></tr>
<tr><td>• աշակերտների նախնական կազմակերպումը դասին,</td><td></td><td></td><td></td><td>9</td></tr>
<tr><td>• դասի խնդիրների հաղորդում,</td><td></td><td></td><td></td><td>9</td></tr>
<tr><td>• աշակերտների համապատասխան բաժանումը և տեղաշարժը</td><td></td><td></td><td>7</td><td></td></tr>
<tr><td>2.տերմինաբանության և խոսքի կուլտուրա</td><td></td><td></td><td>7</td><td></td><td>7</td></tr>
<tr><td>3. շփումը աշակերտների հետ</td><td></td><td></td><td>8</td><td></td><td>8</td></tr>
<tr><td>4.աշակերտների կարգապահու-թյունը</td><td></td><td>6</td><td></td><td></td><td>6</td></tr>
</table>

Աղյուսակ 16-ի շարունակություն

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5.կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրների ապահովումը | | | 8 | | 8 | |
| 6. ներգրավիչ մաս<br>• տևողություն, | | | 8 | | (8+8+9+7 +8+7) : 6 = 7,8 | |
| • բովանդակության համապատա-սխանումը հիմնական խնդիրներին, | | | | 9 | | |
| • մասնակի խնդիրների լուծում (շարային վարժությունների ուսուցում, կեցվածքի ձևավորում), | | | 7 | | | |
| • համապատասխան մեթոդների կիրառում | | | 8 | | | |
| • բեռնվածության չափավորում, տերմինների ճիշտ կիրառում, | | | 7 | | | |
| 7.հիմնական մաս<br>• տևողությունը և կազմակերպումը, | | | 8 | | (8+7+7+7+ 8+7+9+9+ 7) : 9 = 7,6 | |
| • վարժությունների ուսուցումը ընթացքում՝ մոտեցնող և նախա-պատրաստական վարժությունների ընտրությունը, դրանց հաջորդականությունը, | | | 7 | | | |
| • անվտանգության կանոնների և ապահովման իրականացում, | | | 7 | | | |
| • սխալների ուղղում, | | | 7 | | | |
| • համապատասխան մեթոդների կիրառում, | | | 8 | | | |
| • բեռնվածության չափավորում, | | | 7 | | | |
| • շարժողական ընդունակությունների մշակման մեթոդիկան, | | | | 9 | | |
| • խաղի կազմակերպում և անցկացում, | | | | 9 | | |
| • մեթոդական և կազմակերպչական ցուցումներ, | | | 7 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8.եզրափակիչ մաս<br>• տևողություն, | | | | 9 | (9+8+9) : 3 =8,6 | |
| • բովանդակություն, | | | 8 | | | |
| • դասի ամփոփում, տնային առաջադրանքների հանձնարարում, | | | | 9 | | |
| 9.դասի խնդիրների յուրացում, | | | 8 | | 8 | |
| 10.դասի ֆիզոոգիական կորի ապահովում | | 6 | | | 6 | |
| **Ընդհանուր գնահատական (բալ և միավոր)** | | | | | **(8,6+7+8+6+8+7,8+7,6+8,6+8+6) : 10 = 7,5<br>7,5 X 0,2=1,5** | **1,5** |

2 միավորը = 10-ը բալի ((1 բալը = 0,2 միավոր (2: 10= 0,2))

Մանկավարժական պրակտիկայի առջև դրված ժամանակակից պահանջներն առաջադրեցին մեթոդիստների շրջանում կազմակերպել վերապատրաստման դասընթաց: Այն իր մեջ ներառում է պրակտիկայի բովանդակության ծանոթացում նոր ծրագրի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով տարբեր տարիքի դպրոցականների հետ աշխատանքների առանձնահատկություններն ու գնահատման տեխնոլոգիան:

Դասընթացն ըստ կառուցվածքի բաժանված է կազմակերպչական, ուսումնամեթոդական, դաստիարակչական, գիտահետազոտական բաժինների, այդ թվում նաև հաշվետվության կազմման և դիֆերենցված ստուգարքի: Ծրագիրն ամբողջովին իրականացնելու համար պլանավորված է երկու շաբաթ: Դասընթացին մասնակցում են և' երիտասարդ, և' փորձառու մեթոդիստները: Այն իրականացվում է մանկավարժական պրակտիկայի ծրագրի բաժինների բովանդակությանը համապատասխան (հավելված 9):

Ծրագրի հետ մեկտեղ մշակվել են մանկավարժական պրակտիկայի ուսումնամեթոդական ձեռնարկը, ուսանողների աշխատանքային տետրերը և մեթոդիստների մատյանները:

## 3.2. Մանկավարժական պրակտիկայի ծրագրի ներդրման արդյունավետությունը

Մանկավարժական պրակտիկայի լրամշակված ծրագիրը ներդրվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի երրորդ կուրսի ուսումնական գործընթացում: Մանկավարժական պրակտիկան իրականացվել է՝ համաձայն ծրագրի պահանջների: Գիտափորձն անցկացվել է 2011-2012թթ. ուսումնական տարում: Վերլուծվել և ամփոփվել են մարզաառողջարարական ֆակուլտետի 120 ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները:

Գիտափորձի ընթացքում մշակված մանկավարժական պրակտիկայի նոր ծրագրի շրջանակներում նախատեսվում էր կազմակերպել և իրականացնել տարբեր աշխատանքներ, մասնավորապես՝ կազմակերպչական, ուսումնամեթոդական, ֆիզկուլտուրային-առողջարարական, դաստիարակչական, գիտահետազոտական, որոնք ամբողջությամբ պետք է ապահովեն ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորումը:

Մանկավարժական պրակտիկայի հենքային կողմն է՝ ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը, մասնավորապես՝ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պլանավորման փաստաթղթերի կազմումը և դասերի անցկացումը: Յուրաքանչյուր ուսանողի գործունեության համար պլանավորված է մեկական ժամացանց, տարեկան պլան-գրաֆիկ և թեմատիկ պլան, հինգական գործնական դասի ու մեկական տեսական դասի կոնսպեկտներ՝ տարրական և միջին դասարանների համար: Պրակտիկանտները նաև պետք է անցկացնեին գործնական և տեսական դասեր՝ համապատասխան մշակված կոնսպեկտների:

Պրակտիկայի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են հանրակրթական դպրոցում դասավանդվող տարբեր առարկաներից 324 դասալսումներ, որոշվել և գնահատվել են շուրջ 650 աշակերտների ֆիզիկական պատրաստության և զարգացման ցուցանիշները, անցկացվել են 48 զրույցներ՝ նվիրված ինքնուրույն պարապմունքների անցկացման մեթոդիկային, կատարվել է 85 դասի

մանկավարժական վերլուծություն և բեռնվածության որոշում, անցկացվել է 910 և կազմվել են 942 գործնական և տեսական դասերի կոնսպեկտներ և դասեր, 178 ժամացանց, տարեկան պլան-գրաֆիկ և թեմատիկ պլան (տրամագիր 8):




Տրամագիր 8. Պրակտիկայի ընթացքում կատարված ուսումնամեթոդական աշխատանքների քանակը

Մշակված և պրակտիկայում ներդրված գնահատման տեխնոլոգիան հնարավորություն տվեց պրակտիկայի ընթացքում դասի կոնսպեկտների մշակման և դասերի անցկացման ժամանակ անմիջապես բացահայտել ուսանողների կողմից թույլ տրված սխալները և նպատակաուղղված աշխատել դրանց վերացման ուղղությամբ: Այսպես՝ 17-րդ աղյուսակից երևում է, որ ուսանողները դժվարանում են կոնսպեկտ կազմելիս ընտրել վարժությունների ուսուցման համար մոտեցնող և նախապատրաստական վարժություններ, դրանց հաջորդականությունը, բեռնվածության չափավորումը, շարժողական ընդունակությունների մշակման համար համապատասխան միջոցներ և մեթոդներ, նշել համապատասխան մեթոդական և կազմակերպչական ցուցումներ, հստակ պլանավորել տնային առաջադրանքներ: Կոնսպեկտի նշված բաղադրիչներից ուսանողներն առաջին կոնսպեկտներից ստացել են ամենացածր միջին միավորները (3,1 – 4,2):

Աղյուսակ 17

Գիտափորձի ընթացքում կոնսպեկտներ կազմելու գնահատականների շարժընթացը

(միավոր, $\overline{X}$)

| N | Աշխատանքի բովանդակությունը | 1-ին դաս | 2-րդ դաս | 3-րդ դաս | 4-րդ դաս | 5-րդ դաս | 6-րդ դաս | 7-րդ դաս | 8-րդ դաս | 9-րդ դաս | 10-րդ դաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դասի առջև դրված խնդիրները և նրանց փոխկապ նախորդ դասի խնդիրների հետ | 5,1 | 5,1 | 6,1 | 6,1 | 7,1 | 7,1 | 7,4 | 8,1 | 8,3 | 9,2 |
| 2 | Կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրների ապահովումը | 4,4 | 4,8 | 5,1 | 5,6 | 6,3 | 7,1 | 7,3 | 7,3 | 8,1 | 8,4 |
| 3 | Ներգրավիչ մաս, տևողու-թյուն | 6,3 | 7,1 | 7,3 | 7,3 | 8,1 | 8,4 | 8,7 | 9,2 | 9,4 | 9,7 |
| 4 | Բովանդակության համապատաս-խանումը հիմնական խնդիրներին | 5,1 | 5,6 | 6,3 | 6,5 | 7,1 | 7,1 | 7,3 | 7,4 | 8,1 | 8,4 |
| 5 | Մասնակի խնդիրների պլանավորումը (շարային վարժ. ուսուց., կեցվածքի ձևավորում) | 4,4 | 4,8 | 5,1 | 5,6 | 6,3 | 7,1 | 7,3 | 7,3 | 8,1 | 8,4 |
| 6 | Համապատասխան մեթոդ-ների կիրառում | 4,1 | 4,8 | 5,4 | 6,1 | 6,7 | 7,4 | 7,9 | 8,1 | 8,4 | 8,7 |
| 7 | Բեռնվածության չափավորում | 3,2 | 3,9 | 4,1 | 4,3 | 4,7 | 5,3 | 5,9 | 6,5 | 7,3 | 7,6 |
| 8 | Տերմինների ճիշտ գրառում | 4,1 | 4,8 | 5,1 | 5,4 | 5,9 | 6,1 | 6,6 | 7,4 | 8,1 | 8,4 |
| 9 | Հիմնական մաս, տևողություն | 5,1 | 5,7 | 6,3 | 6,8 | 7,1 | 7,2 | 7,4 | 7,6 | 8,1 | 8,5 |
| 10 | Վարժ. ուս. ընթացքում մոտեցնող և նախապատ-րաստ. վարժ. ընտրութ. նրանց հաջորդականություն | 3,1 | 3,3 | 3,6 | 4,3 | 5,1 | 5,6 | 6,2 | 7,1 | 7,8 | 8,3 |
| 11 | Համապատասխան մեթոդների կիրառում | 4,3 | 4,9 | 5,1 | 5,6 | 6,2 | 6,8 | 7,1 | 7,6 | 8,1 | 8,3 |
| 12 | Բեռնվածության չափավորում | 4,2 | 4,9 | 5,1 | 5,2 | 5,8 | 6,6 | 6,8 | 7,3 | 7,9 | 8,3 |
| 13 | Շարժողական ընդունակությունների մշակում (նրանց տեղը դասի ժամանակ) | 3,5 | 3,8 | 4,2 | 4,7 | 5,1 | 5,6 | 6,3 | 6,9 | 7,1 | 7,7 |
| 14 | Մեթոդական և կազմակերպչական ցուցումներ | 3,5 | 4,1 | 4,2 | 5,1 | 5,4 | 6,1 | 6,8 | 7,1 | 7,4 | 7,9 |
| 15 | Եզրափակիչ մաս, տևողություն | 6,7 | 7,1 | 7,3 | 7,3 | 8,1 | 8,4 | 8,7 | 9,2 | 9,4 | 9,8 |
| 16 | Բովանդակությունը | 6,2 | 6,3 | 6,3 | 6,5 | 7,1 | 7,1 | 7,3 | 7,3 | 8,1 | 8,6 |
| 17 | Տնային առաջադրանքների պլանավորում | 4,1 | 4,8 | 5,3 | 5,9 | 6,3 | 6,5 | 6,8 | 7,4 | 7,9 | 8,8 |
| 18 | Ընդհանուր գնահատական | 4,5 | 5,1 | 5,4 | 5,8 | 6,3 | 6,8 | 7,2 | 7,6 | 8,1 | 8,5 |

Ուսանողների պատրաստության թերությունների վաղ հայտնաբերումը հնարավորություն տվեց մեթոդիստներին շեշտադրված աշխատելու այդ բացթողումների վերացման ուղղությամբ: Ներկայացված կոնսպեկտների գնահատման շարժընթացի ուսումնասիրումը ցույց տվեց, որ հինգերորդ և վեցերորդ կոնսպեկտների նշված բաղադրիչների միավորները միջինում բարձրացել են, (5,1 – 6,5), վերջնարդյունքում դրանք կազմել են 7,6 – 8,8 միավոր (աղյուսակ 17):

18-րդ աղյուսակից երևում է, որ ուսանողները սկզբնական շրջանում դաս անցկացնելիս հիմնականում դժվարանում են տալ հրահանգներ, մեթոդական ցուցումներ, ճիշտ տերմիններ օգտագործել, չափավորել բեռնվածությունը, վարժությունների ուսուցման ընթացքում ընտրել մոտեցնող և նախապատրաստական վարժություններ և ապահովել դրանց հաջորդականությունը: Ուսանողները դժվարանում են դասի կոնսպեկտում պլանավորած ներգրավիչ մասի բովանդակությունն իրականացնել գործնականում նշված ժամանակահատվածում (2,3 միավոր): Ինչպես արտերկրյա մասնագետների (Е.В. Крякина, 2006, Е.В. Крякина, Е.В. Разова, 2011, А.Г.Поливаев, И.Н.Григорович, АА.Гераськин, 2010), այնպես էլ մեր կողմից փորձագետների շրջանում անցկացրած հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ պրակտիկանտները դժվարանում են դասի ընթացքում կարգավորել բեռնվածությունը և պահպանել ֆիզիոլոգիական կորը (համապատասխանաբար՝ 3,3 - 3,5 միավոր), ապահովել անվտանգության կանոնները և կատարել սխալների ուղղում (2,9 - 3,2 միավոր), ինչպես նաև ամփոփել դասը և հանձնարարել տնային առաջադրանքներ (2,5 միավոր): Թերությունների վերացման նպատակաուղղված աշխատանքը նպաստեց պրակտիկայի ավարտին միավորների դրական շարընթացին:

Աղյուսակ 18

Գիտափորձի ընթացքում դասի անցկացման գնահատման շարժընթացը

(միավոր, $\overline{X}$)

| N | Աշխատանքի բովանդակությունը | 1-ին դաս | 2-րդ դաս | 3-րդ դաս | 4-րդ դաս | 5-րդ դաս | 6-րդ դաս | 7-րդ դաս | 8-րդ դաս | 9-րդ դաս | 10-րդ դաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դասի կազմակերպում, ժամանակին սկսել դասը | 6,1 | 6,4 | 6,6 | 6,6 | 6,8 | 6,9 | 7,2 | 7,7 | 8,1 | 9,1 |
| 2 | Ուսուցչի ճիշտ տեղի ընտրությունը դահլիճում | 5,2 | 5,9 | 6,1 | 6,7 | 6,6 | 7,6 | 7,9 | 8,5 | 8,6 | 8,7 |
| 3 | Աշակերտների նախնական կազմակերպում դասին | 6,7 | 6,8 | 7,1 | 7,2 | 7,6 | 7,9 | 8,1 | 8,6 | 8,7 | 9,1 |
| 4 | Դասի խնդիրների հաղորդում | 5,3 | 5,8 | 6,6 | 7,1 | 7,2 | 7,6 | 7,9 | 8,1 | 8,5 | 8,5 |
| 5 | Աշակերտների համապատասխան բաժանումը և տեղաշարժը | 6,2 | 6,9 | 7,1 | 7,2 | 7,5 | 7,7 | 8,1 | 8,2 | 8,3 | 8,5 |
| 6 | Տերմինաբանության և խոսքի կուլտուրա | 3,5 | 3,7 | 4,1 | 4,4 | 4,9 | 5,6 | 6,2 | 6,9 | 7,6 | 8,1 |
| 7 | Շփումը աշակերտների հետ | 5,1 | 5,7 | 6,2 | 6,9 | 7,1 | 7,8 | 7,6 | 8,1 | 8,2 | 8,7 |
| 8 | Աշակերտների կարգապահությունը | 6,1 | 6,8 | 6,9 | 7,1 | 7,8 | 7,6 | 8,1 | 8,2 | 8,3 | 8,7 |
| 9 | Կրթական, դաստիարակչական և առողջարարական խնդիրների ապահովումը | 4,3 | 4,4 | 5,1 | 5,6 | 6,1 | 6,3 | 6,9 | 7,1 | 7,5 | 7,8 |
| 10 | Ներգրավիչ մաս, տևողությունը | 2,3 | 3,1 | 3,6 | 4,4 | 4,9 | 5,6 | 6,1 | 6,7 | 7,6 | 7,9 |
| 11 | Բովանդակության համապատասխանումը հիմնական խնդիրներին | 5,1 | 5,6 | 6,3 | 6,5 | 7,1 | 7,1 | 7,3 | 7,3 | 8,1 | 8,1 |
| 12 | Մասնակի խնդիրների լուծումը (շարային վարժությունների ուսուցում, կեցվածքի ձևավորում) | 4,1 | 4,6 | 4,7 | 5,1 | 5,3 | 5,9 | 6,1 | 6,6 | 7,3 | 7,6 |
| 13 | Համապատասխան մեթոդների կիրառում | 4,1 | 4,3 | 4,8 | 5,1 | 5,2 | 5,6 | 5,9 | 6,6 | 7,4 | 7,8 |
| 14 | Բեռնվածության չափավորում, տերմինների ճիշտ կիրառում | 3,3 | 3,5 | 4,1 | 4,2 | 4,6 | 5,3 | 5,8 | 6,3 | 7,2 | 7,4 |
| 15 | Հրահանգներ, մեթոդական ցուցումներ և սխալների ուղղում | 2,9 | 2,8 | 3,2 | 3,4 | 3,9 | 4,5 | 5,2 | 5,6 | 6,2 | 6,6 |
| 16 | Հիմնական մաս, տևողություն և կազմակերպում | 6,1 | 6,8 | 6,9 | 7,1 | 7,8 | 7,6 | 8,1 | 8,2 | 8,3 | 9,1 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **17** | Վարժ. ուսուց. ընթացքում մոտեցնող և նախապատրաստական վարժ. ընտրութ. և նրանց հաջորդա-կանություն | 3,3 | 3,7 | 4,1 | 4,3 | 4,6 | 5,3 | 5,7 | 6,6 | 6,9 | 7,2 |
| **18** | Անվտանգության կանոնների և ապահովման իրականացում | 3,2 | 3,3 | 3,5 | 3,8 | 4,5 | 4,9 | 5,3 | 5,6 | 6,4 | 6,8 |
| **19** | Սխալների ուղղում | 2,9 | 3,1 | 3,6 | 4,1 | 4,6 | 5,1 | 5,7 | 5,9 | 6,1 | 6,2 |
| **20** | Համապատասխան մեթոդների կիրառում | 4,1 | 4,5 | 5,2 | 5,8 | 6,1 | 6,6 | 6,9 | 7,1 | 7,4 | 7,6 |
| **21** | Բեռնվածության չափավորում | 4,1 | 4,5 | 5,2 | 5,8 | 6,1 | 6,6 | 6,9 | 7,1 | 7,4 | 7,5 |
| **22** | Շարժողական ընդունակությունների մշակման մեթոդիկան | 4,6 | 4,8 | 5,4 | 5,9 | 6,6 | 6,8 | 6,9 | 7,1 | 7,4 | 7,8 |
| **23** | Խաղի կազմակերպում և անցկացում | 5,1 | 5,7 | 6,5 | 6,6 | 6,9 | 7,1 | 7,2 | 7,5 | 7,8 | 8,4 |
| **24** | Մեթոդական և կազմակերպչական ցուցումներ | 4,1 | 4,4 | 5,1 | 5,6 | 6,3 | 6,6 | 7,1 | 7,4 | 7,7 | 7,9 |
| **25** | Եզրափակիչ մաս, տևողություն | 5,2 | 5,9 | 6,1 | 6,7 | 6,6 | 7,6 | 7,9 | 8,5 | 8,9 | 9,1 |
| **26** | Բովանդակություն | 6,1 | 6,4 | 6,6 | 6,6 | 6,8 | 6,9 | 7,2 | 7,7 | 8,1 | 8,7 |
| **27** | Դասի ամփոփում, տնային առաջա-դրանքների հանձնարարում | 2,5 | 3,3 | 4,1 | 4,8 | 5,3 | 5,9 | 6,7 | 7,3 | 7,9 | 8,6 |
| **28** | Դասի խնդիրների յուրացում | 4,6 | 4,8 | 5,4 | 5,9 | 6,6 | 6,8 | 6,9 | 7,1 | 7,4 | 8,1 |
| **29** | Դասի ֆիզիոլոգիական կորի ապահովում | 3,5 | 3,7 | 4,1 | 4,4 | 4,9 | 5,6 | 6,2 | 6,9 | 7,1 | 7,2 |
| **30** | Ընդհանուր գնահատական | 4,4 | 4,9 | 5,3 | 5,7 | 6,1 | 6,5 | 6,9 | 7,3 | 7,7 | 8,1 |

9-րդ տրամագրում ներկայացված են մանկավարժական պրակտիկայի ժամանակ ուսանողների կողմից կազմված դասի կոնսպեկտի և դասի անցկացման գնահատման միավորների շարժընթացը: Գիտափորձի ընթացքում ուսանողների առաջադրանքների գնահատականը բարելավվել է՝ դասի կոնսպեկտի կազմման համար 4 միավոր, իսկ դասի անցկացման համար՝ 3,7 միավոր:

Ինչպես նշվել է, ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի գործունեությունը բազմազան է և բազմաբնույթ, որը ծավալվում է ոչ միայն ուսումնամեթոդական աշխատանքներով, այլև արտադասարանական, ֆիզկուլտուրային-առողջարարական միջացառումների կազմակերպմամբ և անցկացմամբ:




Տրամագիր 9.Գիտափորձի ընթացքում դասերի կոնսպեկտների և դասերի անցկացման միավորների շարժընթացը ($\overline{X}$)

Հաշվի առնելով վերը նշվածը՝ մեր կողմից մշակված ծրագրում շեշտադրվում է արտադասարանական, ֆիզկուլտուրային- առողջարարական և մարզական-զանգվածային աշխատանքների իրականացումը, իսկ գնահատման համակարգում այն որոշիչ դեր է խաղում՝ ուսանողներին բարձր գնահատելու համար: Պրակտիկայի ընթացքում կազմակերպվել և անցկացվել են տարբեր բնույթի միջոցառումներ, մասնավորապես՝ 8 ցերեկույթներ և վիկտորինաներ, 86՝ շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ մեծ դասամիջոցներին, 96՝ նախապարապմունքային մարմնամարզության դասեր, 246՝ ֆիզկուլտդադարներ, 36՝ սպորտլանդիաներ, 42՝ մրցումներ տարբեր մարզաձևերից, 46՝ մարզական դասի կոնսպեկտներ և դասեր, 58՝ սեկցիոն պարապմունքի կոնսպեկտներ և պարապմունքներ: Այս բաժնի բոլոր աշխատանքների իրականացումը հնարավորություն է տալիս ուսանողներին հավաքել առավելագույն 25 միավոր (տրամագիր 10):




Տրամագիր 10. Գիտափորձի ընթացքում արտադասարանական աշխատանքների քանակը

Ուսանողների ապագա մանկավարժական գործունեության համար շատ կարևոր է ձեռք բերել կազմակերպչական կարողություններ և ընդհանուր մանկավարժական հատկություններ (Д.И. Воронин, 2007): Դաստիարակչական և կազմակերպչական աշխատանքների գնահատման համար հատկացված են Բոլոնյան համակարգին համապատասխան առավելագույն 15 միավոր: Ուսանողները պրակտիկայի ընթացքում մասնակցել են 36 ծնողական ժողովների, կազմել են 63 աշակերտների հոգեբանական բնութագրեր, կազմակերպել են տարբեր բնույթի և բովանդակության քարոզչական աշխատանքներ, անցկացրել են տուրիստական արշավներ (գծապատկեր 5): Պրակտիկայի ժամանակ ուսանողները լրացրել են օրագրեր և կազմել հաշվետվություն:

Ուսանողները ծնողական ժողովների ժամանակ ոչ միայն պասիվ ներկայություն են ունեցել, այլև անդրադարձել են աշակերտների ֆիզիկական զարգացման, առողջ ապրելակերպի, ինքնուրույն պարապմունքների, օրվա ռեժիմի, ընտանիքի դերը երեխաների ֆիզիկական դաստիարակության գործում և այլ հարցերի: Ուսանողները անհատական զրույցներ են ունեցել նաև ծնողների հետ:

Քարոզչական աշխատանքների շրջանակներում ուսանողները տարբեր բնույթի աշխատանքներ են իրականացրել: Ուսանողների բոլոր խմբերում կազմակերպվել են տարբեր թեմատիկայով ցուցափեղկեր, այցելություններ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի թանգարան, անցկացվել են ճանաչողական բնույթի զրույցներ տարբեր մարզաձևերի վերաբերյալ, միաժամանակյա խաղաշար շախմատից, նաև հանդիպումներ՝ անվանի մարզիկների հետ:

Միջազգային օլիմպիական կոմիտեն արդի ժամանակաշրջանում մեծ նշանակություն է տալիս բնակչության շրջանում օլիմպիական գաղափարների տարածմանը:

Ուսանողների առջև խնդիր էր դրված՝ այդ գաղափարները տարածել դպրոցականների շրջանում: Նրանք կազմակերպել էին տարբեր բնույթի դաստիարակչական միջացառումներ՝ զրույցներ, վիկտորինաներ, զանգվածային միջոցառումներ, տոնակատարություններ: Առանձնակի ուշադրություն էր դարձվել «Արդարացի խաղի» գաղափարախոսության տարածմանը (տրամագիր 11):




Տրամագիր 11. Գիտափորձի ընթացքում դաստիարակչական և կազմակերպչական աշխատանքների քանակը

Այս բոլոր աշխատանքների իրականացումը և ստացված արդյունքների վերլուծություն ցույց է տալիս, որ ուսանողները ձեռք են բերել մանկավարժական

կարողություններ և հմտություններ, մասնավորապես՝ բացատրման և ցուցադրման զուգակցում, օգնության և ապահովության եղանակների տիրապետում, անհատական մոտեցում վարժությունների կատարման ժամանակ, բեռնվածության չափավորում, սխալների բացահայտման և ուղղման կարողության տիրապետում, տարբեր պայմաններում ուսումնական պարապմունքների և դաստիարակչական աշխատանքների անցկացում, կազմակերպչական կարողությունների տիրապետում, միջառարկայական կապերի իրականացում, աշակերտների գործունեության ձևերի ակտիվացում:

## 3.3.Փորձագետների կարծիքը ծրագրի ներդրման արդյունավետության վերաբերյալ

Աշխատանքի տրամաբանությունը պահանջում է գիտափորձից հետո հարցում անցկացնել փորձագետների շրջանում՝ ծրագրի արդյունավետությունը որոշելու նպատակով:

Հանգուցային հարցերից են ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների տիրապետման մակարդակի որոշումը: Ծրագրի բովանդակությունը պահանջում է, որպեսզի ուսանողները իրականացնեն տարբեր աշխատանքներ՝ դպրոցում մանկավարժական պրակտիկայի շրջանակներում, մասնավորապես՝ կազմակերպչական, ուսումնական, մեթոդական, դաստիարակչական, ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական-զանգվածային: Արդյունքում՝ վերը նշված աշխատանքների իրականացումը հնարավորություն է տալիս ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական գիտելիքներ և կարողություններ: 19-րդ աղյուսակից հստակ երևում է ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների շարժընթացը, որը հաստատում է մանկավարժական պրակտիկայի նոր ծրագրի արդյունավետությունը:

Աղյուսակ 19

Փորձագետների կարծիքը՝ ուսանողների մասնագիտական կարողությունների տիրապետման մակարդակի վերաբերյալ (%)

| N | Հիմնական կարողությունները | Մինչ գիտափորձ | | | Գիտափորձից հետո | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բարձր | Միջին | Բարձր | Միջին | Բարձր | Միջին |
| 1 | Բացատրման | -- | 38,3 | 61,7 | 15,6 | 72,3 | 12,1 |
| 2 | Ցուցադրման | --- | 59,6 | 40,4 | 20,4 | 62,8 | 16,8 |
| 3 | Բացատրման և ցուցադրման զուգակցում | --- | 55,3 | 44,7 | 27,8 | 61,1 | 11 |
| 4 | Տեսական գիտելիքների հաղորդում | --- | 31,9 | 68,1 | 18,3 | 51,3 | 30,4 |
| 5 | Տեղեկությունների հաղորդում՝ գիտելիքների հիմունքներից և առողջ ապրելակերպից | --- | 29,8 | 70,2 | 17,9 | 63,4 | 18,7 |
| 6 | Տերմինաբանության կիրառում | --- | 38,3 | 61,7 | 25,8 | 46,4 | 27,8 |
| 7 | Ուսուցանվող վարժությունների տեխնիկայի տիրապետում | --- | 51,1 | 48,9 | 26,2 | 68,4 | 5,4 |
| 8 | Կանխագուշակել դժվարությունները մինչ դասի խնդիրների իրականացում | --- | 29,8 | 70,2 | 12,3 | 37,5 | 50,2 |
| 9 | Օգնության և ապահովության եղանակների տիրապետում | --- | 38,3 | 61,7 | 17,1 | 52,3 | 30,6 |
| 10 | Անհատական մոտեցման կարողության իրականացում | --- | 31,9 | 68,1 | 19,1 | 51,2 | 29,7 |
| 11 | Բեռնվածության չափավորում | --- | 53,2 | 46,8 | 19,3 | 67,4 | 13,3 |
| 12 | Անհատական, խմբային և ընդհանուր սխալների պարզաբանում | --- | 25,5 | 74,5 | 16,2 | 45,6 | 38,2 |
| 13 | Սխալների բացահայտում և ուղղում | --- | 31,9 | 68,1 | 17,6 | 40,5 | 41,9 |
| 14 | Գնահատում | --- | 29,8 | 70,2 | 22,4 | 42,7 | 34,9 |
| 15 | Կազմակերպչական կարողությունների տիրապետում | --- | 48,9 | 51,1 | 30,5 | 60,4 | 9,1 |
| 16 | Հսկում | --- | 31,9 | 68,1 | 16,3 | 51,4 | 32,3 |
| 17 | Միջառարկայական կապերի իրականացում | --- | 14,9 | 85,1 | 20,8 | 45,1 | 34,1 |
| 18 | Աշակերտների գործունեության ձևերի ակտիվացում | --- | 53,2 | 46,8 | 13,6 | 61,7 | 24,7 |
| 19 | Դաստիարակչական աշխատանքների իրականացում | --- | 19,2 | 80,8 | 27,8 | 45,9 | 26,3 |

Գիտափորձից հետո փորձագետների կարծիքների վերլուծությունը բացահայտեց ուսանողների ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու կարողությունները: Այսպես՝ իրենց խմբում ընդգրկված ուսանողների 56,8%-ը կարող են կազմակերպել սպորտլանդիաներ, 15,2%-ը՝ համայնքային խաղեր, 17,6%-ը՝ կրոսավազք, 18,2%-ը՝ էքսկուրսիաներ, 26,4%-ը՝ նախապարապմունքային մարմնամարզություն, 35,7%-ը՝ ֆիզկուլտդադարներ, 16,8%-ը՝ շարժախաղեր մեծ դասամիջոցներին, 18,6%-ը՝ ֆիզիկական պատրաստվածության գնահատում և 8,5%-ը՝ ցերեկույթներ (աղյուսակ 20):

Աղյուսակ 20

Փորձագետների կարծիքը՝ ուսանողների ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման և անցկացման կարողությունների փոփոխությունը գիտափորձի արդյունքում

| N | Ֆիզկուլտուրային-առողջարարան միջոցառումների ձևերը | % |
|---|---|---|
| 1. | Սպոտլանդիաներ | 56,8 |
| 2. | Համայնքային խաղեր | 15,2 |
| 3. | Կրոսավազք | 17,6 |
| 4. | Էքսկուրսիաներ | 18,2 |
| 5. | Նախապարապմունքային մարմնամարզություն | 26,4 |
| 6. | Ֆիզկուլտդադար | 35,7 |
| 7. | Շարժախաղեր մեծ դասամիջոցներին | 16,8 |
| 8. | Ֆիզիկական պատրաստվածության գնահատում | 18,6 |
| 9. | Երեկույթներ և ցերեկույթներ | 8,5 |

Գիտափորձից հետո սոցիոլոգիական հարցման միջոցով բացահայտվեց ուսանողների պատրաստվածությունը տարբեր մարզաձևերից մրցումներ

կազմակերպելու և մրցավար լինելու կարողության վերաբերյալ: Այսպես՝ փորձագետների կարծիքով աթլետիկայից 33,4%-ը կարող են կազմակերպել մրցումներ, իսկ 18,5%-ը՝ լինել մրցավարներ, բասկետբոլից՝ 55,6%-ը կազմակերպել մրցումներ և 35,6%-ը կատարել մրցավարություն, վոլեյբոլից՝ 54,3%-ը՝ մրցումներ և 36,2%-ը հանդես գալ որպես մրցավարներ, հանդբոլից՝ 18,2%-ն անցկացնել մրցումներ և 11,3%-ը լինել մրցավարներ, սեղանի թենիսից 48,7%-ը՝ մրցումներ և 28,4%-ը՝ կատարել մրցավարություն, շախմատից 42,7%-ը՝ մրցումներ և 24,2%-ը լինել մրցավարներ, ֆուտբոլից 79,3%-ը կազմակերպել մրցումներ և 68,4%-ը լինել մրցավարներ (աղյուսակ 21):

Աղյուսակ 21

Փորձագետների կարծիքը գիտափորձից հետո ուսանողների մրցումներ կազմակերպելու և մրցավար լինելու կարողությունների վերաբերյալ (%)

| N | Մարզաձևեր | Մրցումներ կազմակեր-պելու կարողություն | Մրցավար լինելու կարողություն |
|---|---|---|---|
| 1. | Աթլետիկա | 33,4 | 18,5 |
| 2. | Բասկետբոլ | 55,6 | 35,6 |
| 3. | Վոլեյբոլ | 54.3 | 36,2 |
| 4. | Հանդբոլ | 18,2 | 11,3 |
| 5. | Սեղանի թենիս | 48,7 | 28,4 |
| 6. | Շախմատ | 42,7 | 24,2 |
| 7. | Ֆուտբոլ | 79,3 | 68,4 |

### 3.4. Ուսանողների մասնագիտական պատրաստվածության աստիճանի ինքնագնահատումը գիտափորձից հետո

